

Լիլիթ Հր. Հովհաննիսյան

Պատմ. գիտ. թեկնածու

ՄԻԱՑՅԱԼ ԵՎ ԱՆԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՂԱՓԱՐԻ
ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԱՄՆ
ՊԵՏԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ
(1917–1920 թթ.)*

Բանալի բառեր - Միացյալ և Անկախ Հայաստան, Արևմտյան Հայաստան, Հայաստանի Հանրապետություն, Օսմանյան կայսրություն, ԱՄՆ, պետդեպարտամենտ, մանդատ, ազատ ինքնորոշում, անկախություն, Փարիզի հաշտության միջազգային վեհաժողով, Չորսի խորհուրդ, Վ. Վիլսոն:

1917-1920 թթ. հայոց պատմության ուսումնասիրության տեսանկյունից առաջնակարգ նշանակություն ունեն ԱՄՆ Պետական դեպարտամենտի փաստաթղթերը, որոնք լույս են սփռում Ռուսաստանից Անդրկովկասի անջատման ու տարածաշրջանի ժողովուրդների անկախության, Արևմտյան Հայաստանի ազատագրության և Հայաստանի Հանրապետությանը միավորելու, Հայաստանի Հանրապետության ու Թուրքիայի սահմանների վերաբերյալ ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի՝ նոյեմբերի 22-ի Իրավարար վճռի ընդունման, տարագիր հայերի հայրենադարձության կազմակերպման և այլ հիմնահարցերի վերաբերյալ ԱՄՆ-ի ու նրան դաշնակից Անտանտի պետությունների պաշտոնական դիրքորոշումների վրա:

Վաշինգտոնի Ազգային արխիվում պահպանվող այդ վավերագրերի առավել կարևոր մասն ընդգրկված է 1931–1947 թթ. ԱՄՆ կառավարության կողմից պաշտոնապես հրատարակված հատորներում, որոնցից մեծ թվով պատճեններ տրամադրվել են Հայաստանի Ազգային արխիվին և պահպանվում են նրա միկրոֆիլմերի հավաքածուներում: Նշված արխիվային սկզբնաղբյուրների հիման վրա պատմաբան Գայանե Մախմուրյանը կազմել և ռուսերեն է թարգմանել «Հայաստանը ԱՄՆ պետական դեպարտամենտի 1917–1920 թթ. փաստաթղթերում»¹

* Ընդունվել է տպագրության 14. 08.2019:

1 Տե՛ս Armenia in documents of the US State Department 1917–1920 гг. (сост. и пер. с англ. Махмурия Г. Г.), Ереван, Ин-т истории НАН Армении, 2011: 2012 թ. ժողովածուն վերահրատարակվել է:

ծավալուն ժողովածուն, որը 2011 թ. հրատարակել է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտը: ԱՄՆ պետդեպարտամենտի արխիվային ֆոնդերում պահվող մեծաթիվ փաստաթղթերն ուսումնասիրել և Հայաստանի առաջին Հանրապետության ու Հայկական հարցի վերաբերյալ իրենց աշխատություններում օգտագործել են հայ պատմաբաններից Գալուստ Գալոյանը, Գայանե Մախմուդյանը և Ռիչարդ Հովհաննիսյանը:

Սույն զեկույցում ներկայացված են ԱՄՆ պետդեպարտամենտի այն փաստաթղթերը, որոնք վերաբերում են 1917–1920 թթ. Միացյալ ու Անկախ Հայաստանի ստեղծման հիմնահարցի շուրջ ծավալված պաշտոնական քննարկումներին և բացահայտում են դրա ամերիկյան ընկալման էությունն ու բովանդակությունը:

1917 թ. Փետրվարյան հեղափոխության հաղթանակը Ռուսաստանում և ապա նույն թվականի ապրիլին ԱՄՆ-ի մուտքը համաշխարհային պատերազմ, նաև՝ փոքր ու ճնշված ազգերի քաղաքական իրավունքների պաշտպանության վերաբերյալ նախագահ Վ. Վիլսոնի հայտարարությունները պատմական նշանակալի իրադարձություններ էին, որոնք Անտանտի երկրների քաղաքական օրակարգ բերեցին բռնազավթումների սկզբունքից հրաժարվելու և ժողովուրդների ինքնորոշման իրավունքը հարգելու անհրաժեշտությունը²: Դրանով լուրջ հարված էր հասցվում Օսմանյան կայսրության ասիական տիրույթների մասնատման վերաբերյալ 1915–1916 թթ. անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագրերին, ինչը նշանակում էր, որ Հայկական հարցի լուծման դիվանագիտական սկզբունքները ենթարկվելու էին վերանայման³:

Աստիճանաբար փոխվում էին նաև Արևմտյան Հայաստանի հարցի լուծման գործում վճռորոշ դերակատարում ունեցող աշխարհաքաղաքական ակտորները. Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան Ռուսաստանից անթաքույց կերպով շրջվում էին դեպի պատերազմի մեջ մտած ԱՄՆ-ը, որի արտաքին քաղաքականության ուղղվածությունն ու ակտիվությունը պատերազմի ցանկալի ավարտ և արդյունքներ էին խոստանում⁴: Փետրվարյան հեղափոխությունից հետո Ռուսաստանն աստիճանաբար կորցնում էր իր ազդեցիկ դերն Արևմտյան Հայաստանի իրավական կարգավիճակի վերաբերյալ որոշումներ կայացնելու գործում, ինչի առաջին վկայությունը 1917 թ. ապրիլի 20-ին (մայիսի 3-ին) Սեն-ժան-դե Մորիենի անգլո-ֆրանս-իտալա-

2 Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 57, ց. 1, գ. 151, թ. 12-13, 20-21:

3 Ըստ այդ համաձայնագրերի Օսմանյան կայսրության ասիական տիրույթները բաժանվելու էին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև: Արևմտյան Հայաստանը մասնատվելու էր Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև: Ֆրանսիային էր անցնելու նաև Կիլիկիան: Տե՛ս **Հովհաննիսյան Լ.**, Հայկական հարցը և մեծ տերությունները 1914–1917 թվականներին, Եր., «Ձանգակ-97», 2002, էջ 146-147:

4 Դեռևս 1916 թ. փետրվարի 14-ին ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի միջև ստորագրվել էր այսպես կոչված «անորսալի համաձայնագիրը» Օսմանյան կայսրության վերաբերյալ, ըստ որի՝ ԱՄՆ-ը իր մասնաբաժինը պետք է ստանար Մերձավոր Արևելքում: Ավելին՝ Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Ա. Բալֆորի միջոցով ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնը քաջատեղյակ էր Ասիական Թուրքիայի բաժանման վերաբերյալ անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագրերին: Տե՛ս **Մախմուդյան Գ.**, Հայաստանն ու Հայկական հարցը ԱՄՆ-ի 1917–1918 թթ. քաղաքականության ոլորտում, «Առաջին աշխարհամարտը և հայ ժողովուրդը (պատմություն և արդիական խնդիրներ)» միջազգային գիտաժողովի զեկույցումների ժողովածու, Եր., ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 2015, էջ 160-161:

կան համաձայնագրի կնքումն էր առանց Ռուսաստանի մասնակցության⁵: Ավելին՝ դաշնակիցները սպառնում էին Ռուսաստանին դուրս թողնել հետպատերազմյան աշխարհակարգի ձևավորմանն ուղղված ռազմաքաղաքական «խաղից», եթե վերջինս չվերանայեր իր գործողությունների ակտիվությունը ռազմաճակատներում: Այս պայմանների ազդեցությամբ է, որ Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունը Լեհաստանի, Լիտվայի, Լատվիայի, Էլզաս-Լոթարինգիայի և Արևմտյան Հայաստանի հարցում որդեգրեց «հաշտություն՝ առանց զինագրավումների ու ռազմատուգանքների՝ ժողովուրդների ինքնորոշման հիման վրա» գզուշավոր մոտեցումը՝ նպատակ ունենալով նշված տարածքները վերածել բուֆերային կամ անվտանգության գոտիների Գերմանիայի ու Ռուսաստանի, Գերմանիայի ու Ֆրանսիայի միջև: Արևմտյան Հայաստանն այդ նույն դերը կարող էր կատարել Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի ազդեցության գոտիների միջև՝ 1915–1916 թթ. այդ պետությունների ստորագրած գաղտնի համաձայնագրերի իրագործման դեպքում, իսկ Կոստանդնուպոլիսն ու սևծովյան նեղուցները Ռուսաստանին չտրվելու դեպքում Արևմտյան Հայաստանը կձառայեր իբրև բուֆեր նրա ու Թուրքիայի միջև⁶: Դա նշանակում էր Ռուսաստանի վերադարձ Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության քաղաքականությանն այն հաշվով, որ նրան դաշնակից տերություններն էլ չկարողանային Ասիական Թուրքիայում իրենց հետաքրքրող տարածքների համար պահանջել ավելին, քան դրանց ինքնավարությունը կայսրության սահմաններում այնքան ժամանակ, քանի դեռ լուծված չէր Կոստանդնուպոլիսի և սևծովյան նեղուցների հարցը⁷: Դրանով ժամանակավոր կառավարությունն, ըստ էության, ակնարկում էր, որ առանց Ռուսաստանի տնտեսության զարգացման և արտաքին անվտանգության ամրապնդման տեսանկյունից կարևոր այդ տարածքների՝ իմաստ չէր տեսնում պահելու Արևմտյան Հայաստանը⁸: Երկյուղելով, որ Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան կարող էին մերժել Արևմտյան Հայաստանի ինքնավարության գաղափարը և Ռուսաստանին զրկել այդ տարածքից, ռազմական նախարար Ալեքսանդր Վերխովսկին իրատեսորեն առաջարկում էր պահպանել գոնե Արևմտյան Հայաստանի արևելյան շրջանները, որոնք ոչ միայն փաստացիորեն պատկանում էին Ռուսաստանին, այլև նրան էին հանձնվելու պատերազմից հետո՝ ըստ 1915–1916 թթ. անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագրերի:

Թեև ԱՄՆ-ը մինչև համաշխարհային պատերազմի ավարտը չէզոքություն պահպանեց Օսմանյան կայսրության հանդեպ, այնուամենայնիվ հայ ազգային-քաղաքական շրջանակներում գերիշխող էր այն տեսակետը, որ «ԱՄՆ-ը կարող է

5 Այս մասին Տե՛ս **Հովհաննիսյան Լ.**, Հայկական հարցը և մեծ տերությունները 1914–1917 թվականներին, էջ 98: Տե՛ս նաև **Պալյան Պ.**, Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առձևակառուցումներում (XVI դարից 1917 թ.), Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2004, էջ 692-693:

6 Տե՛ս **Марукян А. П.** Армянский вопрос и политика России (1915–1917 гг.), Ереван., МИГА НАН РА, 2003, с. 325-399:

7 Ըստ ամերիկյան դիվանագիտական փաստաթղթերի՝ 1917 թ. կեսերին Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան, նահանջելով 1915–1916 թթ. գաղտնի համաձայնագրերի դիրքերից, կրկին առաջարկում էին Արևմտյան Հայաստանին տալ ինքնավարություն թուրքական պետության սահմաններում: **Махмуриян Г. Г.** Армения в политике США 1917–1923 гг. Ер., Ин-т истории НАН Армении, 2018, с. 28-29.

8 Տե՛ս **Марукян А. П.** նշվ. աշխ., էջ 376:

իր առանձին դիրքի շնորհիվ խոշոր դեր խաղալ թուրքահայկական հարցի վերջնական վճռի խնդրում»⁹:

1917 թ. ապրիլի սկզբներին Հայոց կենտրոնական ազգային բյուրոյի որոշմամբ և Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ V Սուրենյանցի համաձայնությամբ՝ ԱՄՆ գործուղվեց արևմտահայ հայտնի գործիչ, օսմանյան խորհրդարանի նախկին անդամ Գարեգին Փաստրմաճյանը (Արմեն Գարո): Նա կատարելու էր ամերիկյան «թե՛ կառավարական և թե՛ հասարակական շրջաններում Հայկական դատը պրոպագանդելու և կազմակերպելու»¹⁰ հատուկ առաքելություն: Այս առաքելությունը նպատակահարմար գտան նաև Պետրոգրադում, ուր ժամանեց Գ. Փաստրմաճյանը: Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունում համարում էին, որ միայն ԱՄՆ-ը կկարողանա չեզոքացնել ֆրանսիական ծրագրերը Կիլիկիայի նկատմամբ¹¹: Տեղեկացնելով Վեհափառին իր պետրոգրադյան հանդիպումների մասին՝ մայիսի 10-ին Գ. Փաստրմաճյանը բացահայտում էր նաև Հայկական հարցի հանդեպ օրվան ռուսական իշխանությունների մոտեցումները. «Բուն Հայաստանը (վեց վիլայեթները) և Կիլիկիան միասին կազմելու են մի ինքնավար քաղաքական միություն, որը կդրվի, բոլոր պետությունների համաձայնությամբ, ռուսական պաշտպանության տակ»¹²:

Սակայն 1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջումը և Ռուսաստանից Անդրկովկասի անջատումը նոր ու էական շտկումներ մտցրին Հայաստանի սահմանների և իրավաքաղաքական կարգավիճակի վերաբերյալ տերությունների, մասնավորապես՝ ԱՄՆ-ի դիրքորոշումներում: Այսպես՝ Թիֆլիսում ԱՄՆ հյուպատոս Ֆելիքս Սմիթի՝ հոկտեմբերի 19-ի ճեպագիրն՝ ուղղված Ռուսաստանում ԱՄՆ դեսպան Դեվիդ Ֆրենսիսին և պետքարտուղար Ռոբերտ Լանսինգին, ապա՝ նոյեմբերի 9-ին վերջինիս ուղղված հեռագիրը բուշևիկյան կառավարության նկատմամբ Անդրկովկասի իշխանության ազգային մարմինների դիրքորոշման, երկրամասի ժողովուրդների անջատողական տրամադրությունների և դրանց իրագործմանը նյութական ու ռազմական աջակցություն ցույց տալու վերաբերյալ, վկայում են, որ ԱՄՆ պետդեպարտամենտը, հիմնավորված զգուշավորություն դրսևորելով, խուսափեց փաստացիորեն ճանաչել Անդրկովկասյան կոմիսարիատի իշխանությունը և չէր շտապում նյութական օգնություն տրամադրել նրան: Չնայած դրան՝ Ռ. Լանսինգը, Ֆ. Սմիթը և Եվրոպայում ԱՄՆ կառավարության հատուկ ներկայացուցիչ Էդվարդ Հաուզն ուշադրությամբ հետևում էին Անդրկովկասում տեղի ունեցող իրադարձություններին¹³: Վերջինս Անդրկովկասում տիրող քաղաքական իրադրության հարցը քննարկել էր Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի կառավարությունների

9 ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 154, թ. 1: Նշենք, որ ԱՄՆ-ը Օսմանյան կայսրությանը ոչ միայն պատերազմ չէր հայտարարել, այլև երկու պետությունների միջև դիվանագիտական հարաբերությունների խզողը թուրքական կողմն էր: Տե՛ս Papers relating to the foreign relations of the United States. 1917 Supplement 1, The World War. Washington, D. C.: US Government Printing Office, 1931, էջ 603:

10 Հովհաննիսյան Լ., Հայկական հարցը և մեծ տերությունները 1914–1917 թվականներին, էջ 146-147:

11 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 154, թ. 17-18:

12 Նույն տեղում, թ. 18:

13 Տե՛ս Armenia в документах государственного департамента США 1917–1920 гг., док. N 2, с. 12, док. N 3, с. 13, док. N 5, էջ 14, док. N 6, էջ 15:

ղեկավարների հետ, ուստիև դեկտեմբերի 2-ին Փարիզից հեռագրեց Ռ. Լանսին-գին, որ քննարկման մասնակիցները պաշտոնապես միակարծիք են անդրկովկասյան երեք ժողովուրդների անկախական ձգտումներին նյութական և ռազմական միջոցներով սատարելու անհրաժեշտության հարցում՝ երկրամասը թե՛ թուրքական իրրեդենտիզմի, այսինքն՝ թուրքաբնակ տարածքների միավորման, ու թե՛ բոլշևիկյան առաջխաղացման դեմ բուֆերի վերածելու հեռանկարով¹⁴: Թեև Է. Հաուզն Անդրկովկասի անջատողական ձգտումներին սատարելը ներքին անկարգությունների խորացման տեսանկյունից վտանգավոր էր համարում, այնուամենայնիվ պաշտպանեց տեղում խորհրդակցելու և գործողությունների ծրագիր մշակելու նպատակով Ռուսինիայից Թիֆլիս ու Նովոչերկասկ անգլո-ֆրանսիական զինվորական առաքելություն ուղարկելու՝ Ֆրանսիայի, Իտալիայի և Մեծ Բրիտանիայի կառավարությունների մտադրությունը¹⁵:

Իսկ Ֆ. Սմիթը չէր բացառում, որ ռուսական քայքայվող ռազմաճակատներում գտնվող զորքին Անտանտի տերությունների դեմ էր օգտագործում Գերմանիան: Նրա համոզմամբ՝ Անդրկովկասում կռվող ռուսական զորքի և ձևավորվող ազգային զորամիավորումների դիմադրական ոգին վարձատրման միջոցով փոքր-ինչ ամրապնդելու հարցում հապաղելը կարող էր հանգեցնել երկրամասում բոլշևիկյան իշխանության հաստատմանը և «Հայաստանի կորստին», հետևաբար նաև՝ թուրք-գերմանական զորքի կուտակմանը Բաղդադում ընդդեմ բրիտանացիների: Թեև ամերիկյան դիվանագետը վստահ չէր, որ այդ գաղափարի իրագործումը հաջողություն կբերեր, սակայն նրա կարծիքով՝ դա թշնամուն առավելագույն դժվարություններ պատճառելու՝ քիչ վտանգներ պարունակող միակ հարմար տարբերակն էր¹⁶: Այսպիսով, արձանագրվում էր Անտանտի պետությունների և ԱՄՆ-ի հետաքրքրվածությունը նաև Անդրկովկասի հարցով, թեև այս տարածաշրջանում, ինչպես և ասիական Թուրքիայում նրանց շահերը դեռ հստակեցման կարիք ունեին:

Ըստ ԱՄՆ հետախուզական ծառայության 1917 թ. դեկտեմբերի 22-ի հուշագրի՝ Պետդեպարտամենտի նախաձեռնությամբ ձևավորված փորձագետների հատուկ խմբի կողմից մշակվել էին մոտալուտ հաշտության միջազգային վեհաժողովին ներկայացվելիք հանձնարարականներ համաշխարհային պատերազմում ԱՄՆ-ի նպատակների և հաշտության պայմանների վերաբերյալ: Հուշագրում նշված է, որ ԱՄՆ-ը պետք է ապահովեր հայերի երաշխավորված ինքնավարությունը՝ ոչ միայն որպես արդարադատության և մարդասիրության պահանջ, այլև վերականգնելու համար Փոքր Ասիայի միակ ժողովրդին, որն ունակ է կանխելու գեր-

14 Տե՛ս նույն տեղում, փաստ. N 6-8, էջ 15-16, փաստ. N 13, էջ 19-20: Նշենք, որ Կովկասը Թուրքիայի և Ռուսաստանի միջև բուֆերի վերածելու գաղափարն առաջ է քաշվել դեռևս 1853-1856 թթ. Ղրիմի (հայտնի է նաև «Արևելյան» անվամբ) պատերազմի ժամանակ անգլիական պրեմիեր-մինիստր Հենրի Պլամերտոնի կողմից՝ Ռուսաստանը թուլացնելու և նրա ազդեցության ոլորտները նեղացնելու նպատակով: Սակայն այդ գաղափարի զարգացումը և հստակ ձևակերպումը կապվեց «Կովկասյան տան» թուրքական, իսկ հետագայում՝ Կոստանդնուպոլիս-Անդրկովկաս միասնական մանդատի՝ ամերիկյան ծրագրերի հետ: Ղրանցից առաջինը մշակվել է Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, իսկ երկրորդը՝ դրա ավարտից անմիջապես հետո:

15 Տե՛ս նույն տեղում, փաստ. N 7, էջ 15:

16 Տե՛ս նույն տեղում, փաստ. N 8, էջ 15-16:

մանացիների կողմից Թուրքիայի տնտեսական մենաշնորհացումը: Բացի այդ՝ անհրաժեշտ էր համարվում Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդներին ազատել շահագործումից և իշխանության չարաշահումից: Դա ենթադրում էր նվազագույնը՝ ինքնավարություն Արևմտյան Հայաստանի համար, մեծ տերությունների հովանավորություն Պաղեստինի, Սիրիայի, Միջագետքի ու Արաբիայի նկատմամբ, ազատ հաղորդակցության ապահովում սևծովյան նեղուցներով և արդար վերաբերմունք Թուրքիայի նկատմամբ, այսինքն՝ նրա ազատում տնտեսական ու քաղաքական կախվածությունից, Գերմանիայից ունեցած ռազմական պարտքերի դուրսգրում. քանի որ այդ միջոցները չէին օգտագործվել հոգուտ Թուրքիայի, ուստի չէին կարող դիտվել իբրև թուրքական պարտավորություն¹⁷: Իսկ 1917 թ. վերջին Վ. Վիլսոնը պաշտոնապես հայտարարեց, որ հայերին պետք է տրվի անկախություն¹⁸:

Նույն օրերին Հայկական հարցն արծարծվեց նաև ԱՄՆ կոնգրեսում Վ. Վիլսոնի՝ «Համընդհանուր հաշտության մասին» ճառում և Մեծ Բրիտանիայի պրեմիեր մինիստր Դեյվիդ Լլոյդ Ջորջի՝ Համայնքների պալատում ունեցած ելույթում: «Մենք չենք վիճարկում թուրքական կայսրության պահպանումը թուրքերով բնակեցված տարածքներում Կ. Պոլիս մայրաքաղաքով, ... բայց պետք է ճանաչվի Արաբիայի, Հայաստանի, Միջագետքի, Սիրիայի և Պաղեստինի ազգային անկախությունը»¹⁹, - հայտարարեց Դ. Լլոյդ Ջորջը: Միաժամանակ բրիտանական և ֆրանսիական կառավարությունները հստակեցնում էին Անդրկովկասում իրենց ապագա ազդեցության ոլորտները: Այսպես, 1917 թ. դեկտեմբերի 23-ին Փարիզում ստորագրված Ռուսաստանն «ազդեցության գոտիների» բաժանելու վերաբերյալ ֆրանս-անգլիական համաձայնագրով «կազակական և կովկասյան շրջանները», Վրաստանը, Հայաստանը և Քուրդիստանը մտցվեցին անգլիական հետաքրքրությունների շրջանակի մեջ: Մի փոքր ուշ դրանց ավելացվեց Թուրքեստանյան երկրամասը²⁰: 1917 թ. դեկտեմբերի 29-ի հրովարտակով Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների խորհուրդը ևս հանդես եկավ ռուսական զորքի կողմից զինագրավված Արևմտյան Հայաստանի հայերի ազատ ինքնորոշման, լիակատար անկախության, հայկական պետականության ստեղծման խնդրին ցուցաբերված ձևական աջակցությամբ²¹:

Հետպատերազմյան միջազգային հարաբերությունների համակարգում Հայաստանի իրավական կարգավիճակի և սահմանների վերաբերյալ ԱՄՆ-ի կառավարության պաշտոնական դիրքորոշումը ձևակերպվեց 1918 թ. հունվարի 8-ին Վ. Վիլսոնի կողմից Կոնգրեսի երկու պալատների համատեղ նիստում հաշտության պայմանների մասին ունեցած ելույթում ներկայացված նշանավոր «14

17 Տե՛ս Գեոցիդ армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий (ред. и сост. профессор Барсегов Ю. Г.), в 2-х т, т. 1, М., «Гардарика», 2002, док. N 311, էջ 307; Армения в документах государственного департамента США 1917–1920 гг., док. N 12, էջ 18-19:

18 Տե՛ս Գեոցիդ армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 1, док. N 315, էջ 309:

19 Նույն տեղում, փաստ. N 316, էջ 309:

20 Տե՛ս Koppisto L. The British intervention in South Russia 1918–1920, Academic Dissertation, University of Helsinki, 2011, էջ 50-51.

21 Տե՛ս նույն տեղում, փաստ. N 314, էջ 308-309:

կետերում» և դրանց՝ նույն թվականի հոկտեմբերի 14-ին հրապարակված պաշտոնական մեկնաբանություններում, մասնավորապես՝ Կովկասի և Թուրքիայի ճակատագրին վերաբերող 6-րդ և 12-րդ դրույթներում: Դրանցում նշվում էր, որ Կովկասը պետք է դիտել որպես թուրքական կայսրության հիմնահարցի մաս, որ պետք է որևէ տերության սահմանափակ մանդատ տրամադրել՝ այն կառավարելու համար, իսկ Անատոլիան (Թուրքիայի՝ Փոքր Ասիա թերակղզում գտնվող հիմնական մասը – Լ. Հ.) պետք է թողնել Թուրքիային: «Օսմանյան կայսրության թուրքական մասերը պետք է ապահովվեն ամուր ինքնիշխանությամբ, իսկ ներկայումս թուրքական տիրապետության տակ գտնվող ժողովուրդների համար պետք է ապահովել կյանքի անվտանգության և ինքնավար զարգացման համար բացարձակապես անխախտ պայմաններ: Անատոլիան պետք է թողնել Թուրքիային: Հայաստանին պետք է տրվի նավահանգիստ Միջերկրական ծովում որևէ պետության հովանավորության տակ: Հնարավոր է, որ դրան ձգտի Ֆրանսիան, սակայն հայերը կգերադասեն Մեծ Բրիտանիան»²², - շեշտվում էր 12-րդ հիմնադրույթում: Վ. Վիլսոնը դրանով ճանաչում էր Հայաստանի արևմտյան և արևելյան հատվածների տարածքային ամբողջականությունը: Նրա ծրագրի 12-րդ դրույթով մեկընդմիջտ մերժվում էին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի և Իտալիայի գաղտնի համաձայնությունները Օսմանյան կայսրության ասիական տիրույթները միմյանց միջև բաժանելու վերաբերյալ: Ուստի այդ հանգամանքը ոչ միայն օսմանյան պետության տարածքային ամբողջականության վերականգնման, այլև թուրքական ազգային իդեալի իրագործման հույս էր ներշնչում երիտթուրքերին, իսկ հետագայում՝ քեմալականներին:

Հաշտության վերաբերյալ վիլսոնյան դրույթների հիման վրա Օսմանյան կայսրության, Հայաստանի ու Կովկասի ապագա վարչաքաղաքական կառուցվածքի և իրավավիճակի վերաբերյալ մշակվեցին տարբեր նախագծեր: Այսպես, Ռ. Լանսինգը նախագահին առաջարկում էր Օսմանյան կայսրությունը Եվրոպայից դուրս մղելուց հետո Կոստանդնուպոլիսը դնել միջազգային պրոտեկտորատի (հովանավորության) տակ, իսկ Հայաստանը և Սիրիան հանձնել որևէ երկրի կամ երկրների հովանավորությանը: Իրավացիորեն կանխատեսելով հաշտության բանակցություններում Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի փոխհամաձայնեցված հակազդեցությունը ԱՄՆ-ի առաջարկներին՝ պետքարտուղարը նաև հրահանգում էր ամերիկյան դիվանագետներին Վաշինգտոնի կառավարության արտաքին քաղաքականությունը մեկնաբանելիս շեշտել դրա մարդասիրական և անշահախնդիր բնույթը: Իսկ հանրապետական սենատոր Հենրի Լոջն առաջարկում էր ստեղծել անկախ Հայաստան՝ կազմված «Թուրքահայաստանից» ու «Ռուսահայաստանից», Կիլիկիայից ու իրանական Ադրբեջանի հայաբնակ հյուսիսային մարզերից, որոնց վրա ամբողջ Անդրկովկասի հետ միասին պետք է տարածվեր ԱՄՆ-ի ման-

22 Архив полковника Хауза, т. IV, М., «Политиздат», 1944, с. 152-153, 156-157. Վ. Վիլսոնի «14 կետերն» ու դրանց մեկնաբանություններն ամբողջությամբ Տե՛ս նույն տեղում, էջ 148-157: Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. I, док. N 317, с. 309-310.

դատը²³: Թեև այս նախագծերը տակավին ենթակա էին հանգամանալից քննարկման թե՛ ԱՄՆ-ի կառավարող շրջանակներում և թե՛ հաղթող տերությունների հաշտության բանակցությունների ժամանակ, այնուամենայնիվ դրանք հետագայում որոշակիորեն ազդեցին 1918 թ. մայիսի 28-ին հռչակված Հայաստանի Հանրապետության արևմտամետ արտաքին քաղաքական կողմնորոշման ձևավորման վրա: Իսկ մինչ այդ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջնահերթ խնդիրն էր իր սահմաններում ներառել այն բոլոր հայաբնակ տարածքները, որոնք մինչև 1914 թվականը գտնվել էին Ռուսական կայսրության սահմաններում:

Հայկական հարցում ԱՄՆ-ի դիրքորոշումը ինքնավստահություն և ոգևորություն էր ներշնչում նաև երիտթուրք ղեկավարներին: Պատահական չէ, որ Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի կրած պարտությունն էապես չազդեց Կովկասում նրա ծրագրերի վրա: Կովկասը Թուրքիայի ազդեցության ոլորտում ներառելու, իսկ հնարավորության դեպքում՝ այն նվաճելու նպատակը պահպանվեց Կ. Պոլսի կառավարության արտաքին քաղաքականության օրակարգում: Փոխվեցին միայն դրան հասնելու ուղիներն ու ձևերը: Այդ մասին էր վկայում մեծ վեզիր Ահմեդ Իզզեթ փաշայի կողմից 1918 թ. հոկտեմբերի 30-ին Լեմնոս կղզու Մուդրոս նավահանգստում Անտանտի տերությունների հետ գինադարի կնքման ժամանակ շարունակված դիվանագիտական նուրբ խաղը: Նպատակը ժամանակին Թալեաթ փաշայի կողմից նախաձեռնված՝ Գերմանիայի աջակցությամբ Թուրքիայի և կովկասյան ժողովուրդների դաշնություն ստեղծելու ծրագիրն այս անգամ էլ՝ Անտանտի միջոցով իրականացնելն էր: Հաշվի առնելով ԱՄՆ-ի ու նրա եվրոպական դաշնակիցների թշնամական վերաբերմունքը Խորհրդային Ռուսաստանի նկատմամբ և փորձելով այն օգտագործել ի շահ թուրքական ծրագրերի՝ նա առաջ քաշեց Անտանտի երկրների հովանու ներքո Թուրքիայի և կովկասյան ժողովուրդների դաշնություն ստեղծելու հարցը: Իսկ Փարիզի հաշտության վեհաժողովում Դամադ Ֆերիդ փաշան՝ Թուրքիայի նոր մեծ վեզիրը, պնդում էր, որ «...Օսմանյան կայսրության պահպանումը հարկավոր է աշխարհի կրոնական հավասարակշռության համար», որ «քաղաքակրթությունը և արդարությունը պահանջում են լրիվ վերականգնել Օսմանյան կայսրության տարածքները, ինչպես կային պատերազմից առաջ»²⁴:

Փաստորեն, պատերազմում պարտված թուրքերը հավակնում էին և՛ պահպանել Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը, և՛ Կովկասը դարձնել Թուրքիայի ազդեցության ոլորտ: Ուրեմն, թուրքական կառավարությունը չէր հրաժարվում իր համաթուրանական ծրագրից, բայց այս անգամ այն փորձում էր իրականացնել հաղթող տերությունների աջակցությամբ:

Պետքարտուղար Ռ. Լանսինգի՝ 1917–1918 թթ. նամակագրությունը Մեծ Բրիտանիայում ԱՄՆ դեսպան Ուոլթեր Փեյջի, ԱՄՆ-ում Մեծ Բրիտանիայի դեսպան

23 Տե՛ս Armenia в документах государственного департамента США 1917–1920 гг., док. № 39, էջ 37, **Գալոյան Գ.**, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999, էջ 57-59:
24 **Ավետիսյան Հ.**, Հայկական հարցը 1918 թվականին, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1997, էջ 335:

Ռուֆուս Ռեդինգի, Է. Հաուզի, դաշնակիցների Գերագույն ռազմական խորհրդում ԱՄՆ-ի ներկայացուցիչների՝ ռազմական գնումների և ֆինանսների գծով՝ Օսկար Քրոսբիի և գեներալ Թասքեր Բլիսի, Ֆ. Սմիթի, Մեծ Բրիտանիայում ԱՄՆ-ի գործերի հավատարմատար Իրվին Լոլինի հետ վկայում է, որ ԱՄՆ-ի դիվանագիտական շրջանակներում ոչ թե մարդասիրական, այլ աշխարհաքաղաքական շահերի տեսանկյունից էր կարևորվում Օսմանյան կայսրության և Ռուսաստանի սահմաններում ապրող հայերի ֆիզիկական անվտանգության ապահովման խնդիրը: Ընդ որում, ամերիկյան կառավարությունը հետևողականորեն խուսափում էր իրեն կաշկանդել որևէ ֆինանսական և ռազմական պարտավորությամբ՝ դա համարելով Մեծ Բրիտանիայի պարտականությունը կամ էլ բարձրացնելով ԱՄՆ-ի ու Անտանտի դաշնակից տերությունների միասնական որոշումների և գործողությունների հարցը, թեև ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը մեկնաբանելիս պետքարտուղարությունն ընդգծում էր, որ այն հեռու է տարածքային հավակնություններից ու շահադիտական նկատառումներից և առաջնորդվում է միայն մարդասիրական մղումներով²⁵: Ցեղասպանության զոհ դարձած, թուրքերի նոր հարձակումներին և բռնություններին ենթակա, քաղցի ու հիվանդությունների ճիրաններում մի կերպ գոյատևող հայերի բեկորներին ԱՄՆ-ի կողմից ցուցաբերվող օգնությունը նույնպես քողարկվում էր մարդասիրական մղումներով: Այս իմաստով արժանահիշատակ է Հայաստանի և Սիրիայի օգնության ամերիկյան բարեգործական կոմիտեի գործունեությունը, որը 1918 թ. վերջերին ԱՄՆ կառավարության գիտությամբ ու աջակցությամբ պատրաստվում էր հումանիտար ներխուժում իրականացնել Մերձավոր Արևելք²⁶:

Ինդրո առարկա ժամանակահատվածում ԱՄՆ-ի պետդեպարտամենտի՝ Հայաստանին և Հայկական հարցին վերաբերող դիվանագիտական փաստաթղթերի ամենաստվար մասը վերաբերում է Փարիզի հաշտության միջազգային վեհաժողովում քննարկման առարկա դարձած մանդատների հիմնահարցին: Համաշխարհային պատերազմում նախ՝ Օսմանյան կայսրության, ապա նաև՝ Գերմանիայի պարտությունից անմիջապես հետո հաղթած տերությունների դիվանագիտական քննարկումների օրակարգ էին բերվել պարտված պետությունների գաղութների և նրանց իշխանությանը ենթակա տարածքների իրավական կարգավիճակի ու վարչաքաղաքական կառավարման հարցերը: Վ. Վիլսոնը կարևորում էր նշված տարածքների կառավարման կազմակերպումը հովանավոր պետությունների նշանակման միջոցով այնպես, որ հետագայում բացառվեր ենթահովանավորյալ տարածքների զինագրավման հնարավորությունը, հովանավոր պետությունները նպաստեին իրենց կառավարմանը հանձնված տարածքների զարգացմանը հանուն նրանց իսկ բարեկեցության և առանց նրանց բնական ու մարդկային ռեսուրսները շահագործելու հավակնությունների: «Այնտեղ, որտեղ ժողովուր-

25 Տե՛ս Արմենիա в документах государственного департамента США 1917–1920 гг., док. N 39, էջ 37:

26 Այս մասին մանրամասն տե՛ս նույն տեղում, փաստ. N 2, էջ 11-13, փաստ. N 3, էջ 13, փաստ. N 5, էջ 14, փաստ. N 6-7, էջ 15, փաստ. N 8, էջ 15-16, փաստ. N 9, էջ 16, փաստ. N 13, էջ 19-20, փաստ. N 18, էջ 23-24, փաստ. N 19, էջ 25, փաստ. N 35, էջ 35, փաստ. N 39, էջ 37, տե՛ս նաև՝ Սալմուրյան Չ., Հայաստանն ու Հայկական հարցը ԱՄՆ-ի 1917–1918 թթ. քաղաքականության ոլորտում, էջ 164-169:

ըը և տարածքը զարգացած չեն, հարկ է ապահովել նրանց զարգացումը, որպեսզի երբ ժամանակը գա, նրանք իրենց շահերի ընկալմամբ իրավասու լինեն արտահայտելու իրենց ցանկությունները հարաբերությունների վերջնական ձևի վերաբերյալ, որը հնարավոր է՝ հանգեցնի մանդատակիր տերության հետ միավորվելու՝ այդ ժողովուրդների ձգտմանը»²⁷, - նշում էր Վ. Վիլսոնը: 1919 թ. հունվարի 29-ին Տասի խորհրդի²⁸ նիստին Դ. Լյոյդ Ջորջի ներկայացրած մանդատակիր պետությունների վերաբերյալ բանաձևի նախագծում առաջարկվում էր ոչ միայն Գերմանիային զրկել իր գաղութներից, այլև Թուրքիայից ամբողջությամբ անջատել Հայաստանը, Սիրիան, Միջագետքը, Պաղեստինը և Արաբիան: Ընդ որում, շեշտվում էր, որ պատերազմի ընթացքում թուրքերը սարսափելի կոտորածների էին ենթարկել հայերին և թուրքահպատակ այլ քրիստոնյա ժողովուրդների, իսկ Հայաստանի բարեհաջողությունը և զարգացումը բնութագրվում էր իբրև «քաղաքակրթության սրբազան պարտք»²⁹: Նախկինում օսմանյան տիրապետությանը ենթակա տարածքների թվում Հայաստանի նկատմամբ ևս՝ որպես իր տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացմամբ անկախության կարգավիճակին մոտ երկրի սահմանվելու էր որևէ հզոր պետության մանդատը կամ խնամակալությունը: Հայաստանը մանդատի ներքո գտնվելու էր մինչև այն պահը, երբ պատրաստ կլիներ անկախության: Ենթամանդատային տարածքներում բոլոր շահագրգիռ պետություններին առաջարկվելու էին հումքի աղբյուրներից օգտվելու հավասար իրավունքներ ու սահմանափակումներ: Բոլոր մանդատակիր պետությունների համար նույնն էր լինելու նաև մանդատային կառավարման արժեքը: Մանդատը տրվելու էր բոլոր դաշնակից տերությունների համատեղ որոշմամբ, քվեարկության արդյունքում³⁰:

Միաժամանակ բարձրաձայնելով Օսմանյան կայսրությունից, Կովկասից և Ռուսաստանի հարավ-արևելյան մասից բրիտանական զինագրավող զորքը շուտափույթ դուրս բերելու իր կաբինետի որոշման ու տարածաշրջանում խաղաղություն, անվտանգություն և կայուն զարգացում ապահովելու ծախսատար ու ժամանակատար խնդիրների լուծման հոգսը ԱՄՆ-ին հանձնելու անհրաժեշտության մասին՝ Դ. Լյոյդ Ջորջն առաջարկում էր, որ հենց ԱՄՆ-ը վերցնեի Հայաստանի մանդատը³¹: Ընդ որում, նա կարևորում էր, որ վերոնշյալ տարածքներում մանդատ

27 Armenia в документах государственного департамента США 1917–1920 гг., док. N 52, с. 46.

28 Փարիզի հաշտության վեհաժողովի առաջին ղեկավար մարմինը: Գործել է վեհաժողովի աշխատանքի առաջին մեկ և կես ամսվա ընթացքում: Նրանում ընդգրկված են եղել ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի կառավարությունների ղեկավարները և արտաքին գործերի նախարարները:

29 Նույն տեղում, փաստ. N 56, էջ 52-53:

30 Տեն նույն տեղում, փաստ. N 52, էջ 46:

31 Տեն նույն տեղում, փաստ. N 55, էջ 51-52, N 57, էջ 55: 1917 թ. վերջերից Անտանտի և նրան դաշնակից պետությունների «մեծ քաղաքական խաղում» առանցքային էր դարձել տարածքային հարցերը փոխկապվածությամբ լուծելը: Այսպես, Մեծ Բրիտանիան բարձրացրեց 1915–1916 թթ. անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագրերը վերանայելու հարցը՝ ակնկալելով ստանալ մավթառատ Մոսուլը: Եվ քանի որ դաշնակիցները չէին շտապում հստակ արձագանքել դրան, Դ. Լյոյդ Ջորջը հայտարարեց բրիտանական զորքն Օսմանյան կայսրությունից դուրս բերելու, իսկ Կովկասը՝ Իտալիային զիջելու: Մեծ Բրիտանիայի պատրաստակամության մասին: Միայն Մերձավոր Արևելքում միայնակ մնալու տխուր հեռանկարը ստիպեց Ֆրանսիային համաձայնել Մոսուլի զիջմանը Մեծ Բրիտանիային: Այնուհետև անգլիական դիվանագիտությունը կենտրոնացավ ֆրանսիացիներին Սիրիայից դուրս մղելու խնդրի վրա՝ քաջատեղյակ լինելով Սիրիայի և ողջ Օսմանյան կայսրության տարածքի մանդատը ստանալու՝ ԱՄՆ-ի հավակնություններին: Մեծ Բրիտանիայի համար կարևոր էր նաև, որ Վ. Վիլսոնը վիճարկում էր Արևմտյան Հայաստանում Ռուսաստանի իրավունքները

տակիր պետությունը կամ պետությունները որոշված լինեին նախքան հաշտության պայմանագրի կնքումն Օսմանյան կայսրության հետ³²: Սա հրաշալի հնարավորություն էր Վ. Վիլսոնի համար՝ կշռադատված դիվանագիտական քայլերով և առանց վտանգելու բրիտանա-ամերիկյան հարաբերությունները՝ գրավելու այն դիրքերը, որոնք Մեծ Բրիտանիան պատրաստվում էր թողնել տարածաշրջանում:

1919 թ. հունվարի 30-ին Վ. Վիլսոնը պահանջեց ընդունել մանդատակրի համակարգ Օսմանյան կայսրության բոլոր զավթված տարածքների և գերմանական գաղութների համար³³: Հաջորդ օրը վեհաժողովի Տասի խորհուրդն ընդունեց բրիտանական պատվիրակության վերոնշյալ բանաձևի նախագիծը³⁴: Ավելին՝ Վեհաժողովում առաջին անգամ պաշտոնապես դրվեց Հայաստանի, Սիրիայի, Միջագետքի, Պաղեստինի և Արաբիայի նկատմամբ ԱՄՆ-ի՝ որպես մանդատակրի պատրաստության հարցը: Վ. Վիլսոնը դրան տվեց դիվանագիտական պատասխան. «Որ չափով չպետք է խուսափեմ հոգսից, որ Միացյալ Նահանգները չստանա որևէ առավելություն այս պատերազմից, նույն չափով էլ չեմ հոգալու, որ նա խուսափի որևէ բեռից կամ պարտքից: Թեև դժվար է գտնել ինչ-որ բան, որ այնքան անցանկալի լինի ընդունվելու Միացյալ Նահանգների ժողովրդի կողմից, որքան ռազմական պատասխանատվությունն է Ասիայում»³⁵: Նախագահն ակնարկեց, որ բացառություն կարելի է անել միայն Հայաստանի համար, սակայն հրաժարվեց տրամադրել գինագրավող ուժեր՝ շեշտելով, որ ԱՄՆ-ը Թուրքիայի դեմ չի եղել պատերազմի մեջ³⁶:

Ակտիվորեն քննարկվում էր նաև հայկական անկախ պետության ապագա սահմանների հարցը: Տասի խորհրդի՝ 1919 թ. փետրվարի 4-ի նիստում Հունաստանի վարչապետ Էլեվտերիոս Կիրիակու Վենիզելոսը, պատասխանելով այդ հարցին, նշեց, որ հայկական պետությունը պետք է ընդգրկի հայկական վեց վիլայեթները ռուսական Հայաստանի, Տրապիզոնի և Ադանայի վիլայեթների հետ միասին: Իսկ Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Արթուր Բալֆուրը, հիմք ընդունելով փաստացի իրավիճակը, փետրվարի 13-ի նիստում շեշտեց, որ Հայաստանի տարածքում մահմեդականների համեմատ փոքրաթիվ լինելու հետևանքով հայերի ինքնորոշումը հավանաբար չի հանգեցնի հայկական փոքրամասնության կյանքի պայմանների բարելավմանը: Դրան ի պատասխան՝ ամերիկյան միսիոներ, դոկ-

հարգելու անհրաժեշտությունը՝ միաժամանակ նշելով, որ Միացյալ Նահանգները շահագրգռված է ստանալ այդ տարածքի մանդատը:

32 Տե՛ս նույն տեղում, փաստ. N 58, էջ 58-59, փաստ. N 92, էջ 92-93, փաստ. N 97, էջ 98-99, փաստ. N 147, էջ 154:

33 Տե՛ս նույն տեղում, փաստ. N 57, էջ 55-56:

34 Տե՛ս նույն տեղում, փաստ. N 58, էջ 57-60:

35 Նույն տեղում, փաստ. N 58, էջ 59: Ըստ 1919 թ. հունիսի 22-ին մի խումբ ամերիկյան պետական գործիչների կողմից ԱՄՆ նախագահին ուղղված, ապա՝ հունիսի 28-ին պետքարտուղարի օգնական Վիլյամ Ֆիլիփսի միջոցով Փարիզում գործող խաղաղության ամերիկյան պատվիրակությանն ուղարկված համատեղ գրության ամերիկյան հասարակությունը շահագրգռված էր հայ ժողովրդի բարօրությամբ և ակնկալում էր Հայաստանի անկախության վերականգնումը որպես պարտադիր և սրբազան պարտք: Այդ նպատակի իրագործման համար առաջարկվում էր առանց սպասելու հաշտության պայմանագրի կնքմանը Հայաստան ուղարկել նյութական և ռազմական օգնություն, որպեսզի հայերը կարողանային թուրքերից ազատագրել այն բոլոր հայկական տարածքները, որոնք նշված էին Միացյալ և Անկախ Հայաստանի սահմանների վերաբերյալ Միացյալ Հայաստանի պատվիրակության հռչակագրում: Այս մասին տե՛ս նույն տեղում, փաստ. N 132, էջ 140:

36 Տե՛ս նույն տեղում, փաստ. N 57, էջ 55, փաստ. N 58, էջ 58, փաստ. N 92, էջ 93-94:

տոր Հովարդ Բլիսսը նկատեց, որ գաղութային տիրապետությունից ազատագրված յուրաքանչյուր ժողովրդի նկատմամբ հաղթանակած տերությունների մշակած կառավարման մեթոդը պետք է ընտրվի տվյալ ժողովրդի պատմական, սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակին և առանձնահատկություններին համապատասխան՝ ապահովելով առավելագույն արդարություն շահագրգիռ ժողովուրդների համար³⁷:

1919 թ. մարտի 20-ին հաշտության վեհաժողովի Չորսի խորհրդի³⁸ նիստում Վ. Վիլսոնն ակնարկեց Հայաստանի արևմտյան և արևելյան հատվածների նկատմամբ միասնական մանդատ սահմանելու նախընտրելիության մասին՝ դա հիմնավորելով 1915–1916 թթ. անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագրերից Ռուսաստանի հրաժարմամբ, հետևաբար՝ Արևմտյան Հայաստանի մեծ մասի նկատմամբ նրա շահերի ու հետաքրքրությունների իրավական հիմքի վերացմամբ, Արևելյան Հայաստանում ռուսական ազդեցության կորստով և ամբողջ Հայաստանի բնակչության ցանկությունը հաշվի առնելու, այդ երկրի ու նրա բնակչության տնտեսական, սոցիալական, հասարակական-քաղաքական զարգացման աստիճանին համապատասխան մանդատ սահմանելու անհրաժեշտությամբ: Ապա՝ որպես ուշագրավ լրացում ԱՄՆ նախագահն ակնարկեց նաև Կիլիկիայի, Սիրիայի, Պաղեստինի, Միջագետքի և Թուրքիայի՝ Օսմանյան կայսրության բոլոր տարածքների նկատմամբ միասնական մանդատ սահմանելու կարևորության ու նպատակահարմարության մասին՝ մատնանշելով այդ տարածքների զարգացման խնդիրների շաղկապվածությունը: Ֆրանսիայի վարչապետ Ժորժ Կլեմանսոն և Դ. Լյոյդ Ջորջը պաշտպանեցին Վ. Վիլսոնի այդ տեսակետը, նաև մանդատների հարցը տեղում համապարփակ ուսումնասիրելու նպատակով Մերձավոր Արևելք ու Անդրկովկաս առաքելություն ուղարկելու վերաբերյալ նրա առաջարկը³⁹: Հայաստանի մանդատի խնդիրը գործնական և շահադիտական տեսանկյունից դիտարկող «Օգնության ամերիկյան վարչության» ղեկավար Հերբերտ Հուվերի պնդմամբ ևս ամերիկյան մանդատը Հայաստանով սահմանափակելը սխալ էր՝ հաշվի առնելով այդ երկրի ավերված ու քայքայված վիճակը, մանավանդ որ այն վերացնելու, Հայաստանը պաշտպանելու և վերականգնելու համար ԱՄՆ-ից պահանջվելու էին 100 մլն ամերիկյան դոլար, ամենաքիչը 50–100 հազար զինվոր և երկար տարիների ծանր աշխատանք: Իսկ Ռ. Լանսինգը միջազգային հարաբերությունների հետպատերազմյան համակարգում զարգացած Հայաստան ունենալու համար առաջարկում էր հանգամանորեն քննարկել նրա սահմանների հարցը⁴⁰:

1919 թ. մայիսի 14-ին Չորսի խորհրդի նիստում իտալական պատվիրակությանը ներկայացվելիք առաջարկություններում ընդգրկվեց նաև ԱՄՆ-ի կողմից Կոստանդնուպոլսի, սևծովյան նեղուցների և Հայաստանի մանդատը վերցնելու վե-

37 Տե՛ս նույն տեղում, փաստ. N 63, էջ 66:

38 1919 թ. մարտին փոխարինել է Տասի խորհրդին: Չորսի խորհուրդը Փարիզի հաշտության վեհաժողովի առավել կարևոր հարցերը քննարկող և դրանց վերաբերյալ իրավական որոշումներ կայացնող ղեկավար մարմին էր, որի կազմում էին ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի կառավարությունների ղեկավարները:

39 Տե՛ս նույն տեղում, փաստ. N 76, էջ 77-79, N 92, էջ 91-92:

40 Տե՛ս նույն տեղում, փաստ. N 135, էջ 142, փաստ. N 146, էջ 153:

րաբերյալ բրիտանական պատվիրակության անդամ Հարոլդ Նիքոլսոնի կազմած թիվ 1 բանաձևը⁴¹: ԱՄՆ նախագահը իր պետության անունից և Սենատի պարտադիր համաձայնության պայմանով ընդունեց Հայաստանի մանդատը: Հայաստանի սահմանները համաձայնեցվելու էին ամերիկյան, բրիտանական, ֆրանսիական և իտալական պատվիրակությունների միջև և միասնական համաձայնության դեպքում ընդունվելու էին առանց դաշնակիցների Գերագույն խորհրդին դիմելու: Թուրքիայի մանդատը բաժանվելու էր Հունաստանի, Իտալիայի և Ֆրանսիայի միջև⁴²:

Հայաստանի նկատմամբ ամերիկյան մանդատի հարցը քննարկվեց նաև Չորսի խորհրդի՝ 1919 թ. մայիսի 17-ի և 21-ի նիստերում⁴³: Ներկայացնելով բրիտանական պատվիրակության պաշտոնական տեսակետը Անատոլիայի մանդատի վերաբերյալ՝ Դ. Լլոյդ Ջորջը շեշտեց, որ այսուհետև անթույլատրելի է հայերի, հույների և արաբների կառավարումը թուրքերի կողմից: Նա առաջարկեց թուրքերին թողնել միայն այն տարածքների կառավարումը, որտեղ նրանք մեծամասնություն էին կազմում, իսկ Հայաստանի և Կիլիկիայի համար սահմանել միասնական մանդատ՝ այն հանձնելով մեկ պետության կամ մի քանի պետությունների: Այդ մանդատը ժամանակավորապես՝ մինչև «ռուսական խնդրի լուծումը», ներառելու էր նաև որջ կովկասյան տարածաշրջանը՝ Արևելյան Հայաստանով հանդերձ: Բրիտանական պատվիրակությունը կարևորում էր թուրքերով բնակեցված Կոստանդնուպոլսի և Անատոլիայի նկատմամբ միևնույն պետության մանդատի հաստատումը՝ ընդունելով հանդերձ Հայաստանում, Միջագետքում ու Սիրիայում մեկ կամ մի քանի պետությունների մանդատը հաստատելու հնարավորությունը: Միաժամանակ շեշտվում էր, որ բրիտանական պատվիրակության համար նախընտրելի էր Կոստանդնուպոլսում և սևծովյան նեղուցներում, Անատոլիայում, Կիլիկիայում և Հայաստանում, ներառյալ՝ կովկասյան տարածաշրջանը, ԱՄՆ-ի միասնական մանդատի իրագործումը: Առաջարկվում էր Ֆրանսիային հանձնել Սիրիայի, իսկ Մեծ Բրիտանիային՝ Միջագետքի և Պաղեստինի ժամանակավոր մանդատը: ԱՄՆ-ի կողմից Անատոլիայի մանդատը չվերցնելու դեպքում այդ տարածաշրջանը ենթարկվելու էր թուրքական սուլթանի գերիշխանությանը՝ առանց մանդատակրի: Բրիտանական պատվիրակության դիրքորոշումը ձևակերպվեց «Թուրքական կայսրությունում կարգավորման ուրվագիծ» խորագրով հուշագրում, որը Դ. Լլոյդ Ջորջի կողմից 1919 թ. մայիսի 21-ին ներկայացվեց Չորսի խորհրդին⁴⁴:

Հ. Հովերը դեմ էր նախկին Օսմանյան կայսրության ոչ թուրքական տարածքներից միայն Հայաստանի հանձնմանը ԱՄՆ-ի հովանավորությանը: Հայաստանի մանդատի հետ կապված ծախսերն ու դժվարությունները հատուցված տեսնելու համար նա ցանկալի էր համարում, որ ԱՄՆ-ին տրվեր նաև Միջագետքի մանդատը, բայց հաշվի առնելով Մեծ Բրիտանիայի շահերն այդ տա-

41 Տե՛ս նույն տեղում, փաստ. N 99, էջ 103-104:

42 Տե՛ս նույն տեղում, փաստ. N 99-100, էջ 103-104

43 Տե՛ս նույն տեղում, փաստ. N 105, էջ 107-110, փաստ. N 108, էջ 113-118:

44 Տե՛ս նույն տեղում, փաստ. N 109, էջ 118-119:

րածքներում՝ առաջարկում էր, որ Հայաստանի մանդատը վերցնելը Միջազգետքի մանդատը ստացած պետությունը⁴⁵:

Որպես Հայաստանի նկատմամբ ԱՄՆ-ի մանդատի հարցի տրամաբանական շարունակություն՝ 1919 թ. հունիսի 27-ին Գերագույն տնտեսական խորհրդի անունից ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնին գրած նամակում Հ. Հուվերն առաջարկեց, որ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի կողմից Հայաստանում նշանակվի ժամանակավոր կոմիսար՝ «ողջ ռուսական և թուրքական Հայաստանում» այդ պետությունների շահերը ներկայացնելու, Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեությունը վերահսկելու, պետական գործերի, մասնավորապես՝ օգնության ու հայրենադարձության հարցերի վերաբերյալ նրան խորհուրդներ տրամադրելու նպատակով՝ ներառյալ տվյալ տարածքի իրավաքաղաքական կարգավիճակի հստակեցումը: Որպես հարմար թեկնածու կոմիսարի պաշտոնի համար նշված էր ամերիկյան գեներալ Ջեյմս Հարբորդի անունը⁴⁶: Հունիսի 28-ին Գլխավոր դաշնակից և միավորված տերությունների խորհուրդն ընդունեց Հ. Հուվերի առաջարկը և դիմեց Տասի խորհրդին՝ միջոցներ ձեռնարկելու այն իրագործելու ուղղությամբ⁴⁷:

Ուշագրավ է նաև նույն օրը պետքարտուղարի օգնական Վիլյամ Ֆիլիփսի կողմից հաշտության ամերիկյան պատվիրակությանն ուղարկված գրությունը, որում դեռևս 1919 թ. հունիսի 22-ին մի խումբ ամերիկյան պետական գործիչներ՝ Չարլզ Էվանս Հյուզը, Էլիտու Ռուբը, Հենրի Քերթ Լոջը, Ջոն Շարփ Վիլյամսը, Ալֆրեդ Սմիթը, Ջեյմս Վ. Ջերարդը, Ֆրեդերիկ Կուրտլենդ Փենֆիլդը, Չարլզ Վ. Էլիոթը, ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնին հայտնել էին Հայաստանի անկախությունը վերականգնված տեսնելու իրենց ակնկալիքի մասին: Գրության մեջ շեշտված էր, որ կյանքի անվտանգության համատարած բացակայության և Հայաստանի մեծ մասում առկա հսկայական կարիքի պայմաններում անհապաղ գործողությունները պարտադիր ու սրբազան պարտք են: Առաջարկվում էր անհապաղ և առանց սպասելու Օսմանյան կայսրության հետ հաշտության պայմանագրի կնքմանը, որպես առաջին քայլ ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրել պարենային և ռազմական օգնություն 50 հազար զինվորի համար, նաև անհրաժեշտ այլ օժանդակություն, «որպեսզի հայերը կարողանան գրավել Հայաստանի չգրավված մասերն այն սահմաններում, որոնք նշված են Միացյալ Հայաստանի պատվիրակության հուշագրում»⁴⁸:

Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարի իրագործման հարցում ԱՄՆ-ի կառավարության շահագրգռվածության վկայությունն էր 1919 թ. հուլիսի 5-ին ամերիկյան բանակի գնդապետ Վիլյամ Նեֆյու Հասկելին Հայաստանում դաշնակից պետությունների գերագույն կոմիսար նշանակելը: Ըստ պետքարտուղարության փաստաթղթերի՝ գերագույն կոմիսարը պետք է նպաստեր հայկական ան-

45 Տե՛ս նույն տեղում, փաստ. N 135, էջ 142:

46 Տե՛ս նույն տեղում, փաստ. N 126, էջ 135-136:

47 Տե՛ս նույն տեղում, փաստ. N 131, էջ 139-140:

48 Նույն տեղում, փաստ. N 132, էջ 140:

կախ պետության կառավարման բարելավմանը, կազմակերպել ամերիկյան օգնության տրամադրումը Հայաստանին, աջակցել բռնագաղթած հայերի հայրենադարձությանը, քայլեր ձեռնարկել տարածաշրջանում խաղաղությունը պահպանելու և ամրապնդելու ուղղությամբ: Գերագույն կոմիսարին ԱՄՆ-ի կոնգրեսի կողմից տրամադրվելիք ռազմական և ֆինանսական միջոցները ենթակա էին հստակեցման Զ. Հարբորդի առաքելության արդյունքների հիման վրա⁴⁹:

Միացյալ Հայաստանի ստեղծման անհրաժեշտությունն էր ընդգծված նաև հուլիսի 23-ին Թիֆլիսում ԱՄՆ փոխհյուպատոս Հուբեր Դուլիթլի և նրան միացած չորս ամերիկյան զինվորական պաշտոնատար անձանց հեռագրում՝ ուղղված Փարիզում ամերիկյան առաքելության ղեկավարին, ռազմական հետախուզության վարչության տնօրենին, Ռ. Լանսինգին, Հ. Հուվերին, Օսմանյան կայսրությունում ԱՄՆ նախկին դեսպան Հ. Մորգենթաուին: Փաստաթղթում նշված էր, որ Արևմտյան Հայաստանի և Հայաստանի Հանրապետության միջև սահմանի բացման հարցում առկա անորոշությունն անհնար է դարձնում հայերի հայրենադարձությանը և գաղթականներին օգնություն հասցնելուն ուղղված պաշտոնական երևանի ու ամերիկյան բարեգործական կազմակերպությունների ցանկացած գործողություն⁵⁰:

Ուշագրավ էր այս դիվանագիտական քննարկումներին հետևող թուրքական պատվիրակության դիրքորոշումը, որը 1919 թ. հունիսի 23-ին Փարիզի հաշտության վեհաժողովի նախագահ, Ֆրանսիայի վարչապետ Ժ. Կլեմանսոյին ներկայացվեց օսմանյան դիվանագետ, մեծ վեզիր Դամադ Ֆերիդի կողմից՝ հուշագրի տեսքով: Ըստ դրա՝ հայկական անկախ հանրապետությունը Անտանտի տերությունների կողմից ճանաչվելու դեպքում օսմանյան պատվիրակությունը պատրաստ էր քննարկել Օսմանյան կայսրությունը Հայաստանի Հանրապետությունից բաժանող սահմանագծի հարցը, ներառյալ՝ հանրաքվեի անցկացումը, ըստ ամենայնի, աջակցել օսմանյան իշխանությանը ենթակա տարածքից հայերի տեղափոխմանը Հայաստանի Հանրապետություն, իսկ այնտեղ մնացող հայերին՝ որպես ազգային փոքրամասնության, ապահովել տնտեսական և մշակութային ինքնավարությամբ⁵¹: **Դժվար չէ նկատել, որ փորձ էր արվում անգամ Հայաստանի անկախության փաստն օգտագործել՝ հայերից ազատվելու համար, որովհետև Հայաստանի Հանրապետության գոյությունը Թուրքիայի կողմից ճանաչվում էր նախկին ռուսական տարածքներում:**

Միացյալ և անկախ Հայաստանի գաղափարի նկատմամբ ամերիկյան իշխանությունների դիրքորոշման աստիճանական զարգացումն արտացոլվեց նաև Թուրքիայում ԱՄՆ լիազորներ Չարլզ Քրեյնի և Հենրի Քինգի՝ 1919 թ. օգոստոսի 28-ին Փարիզի հաշտության վեհաժողովին և Վ. Վիլսոնին ներկայացրած գե-

49 Տե՛ն նույն տեղում, փաստ. N 142, էջ 149-150, փաստ. N 149, էջ 155-156:

50 Տե՛ն նույն տեղում, փաստ. N 158, էջ 167:

51 Տե՛ն նույն տեղում, փաստ. N 121, էջ 128-129:

կուցագրում⁵², ապա Ջ. Հարբորդի գլխավորած ռազմական առաքելության՝ հոկտեմբերի 16-ին պետդեպարտամենտին, այնուհետև՝ Սենատին ներկայացրած զեկուցագրում⁵³, որոնցում ձևակերպվեց Կոստանդնուպոլսից և Անատոլիայից մինչև Արևմտյան Հայաստան ու Անդրկովկաս ամերիկյան միասնական մանդատի վերաբերյալ նախագահ Վ. Վիլսոնի նախագիծը:

2. Քրեյնի ու Հ. Քինգի, այնուհետև՝ Ջ. Հարբորդի առաքելությունների նպատակը Կոստանդնուպոլսի, սևծովյան նեղուցների, Արևմտյան Հայաստանին անկախություն տալը և հայկական պետության սահմանների հարցերն ամերիկյան միասնական մանդատի տեսանկյունից տեղում ուսումնասիրելն ու դրանց վերաբերյալ գործնական լուծումներ առաջարկելն էր: ԱՄՆ պետդեպարտամենտի փաստաթղթերը վկայում են, որ երկու ամերիկյան առաքելությունների գործունեությունն էլ համընկավ տարածաշրջանից բրիտանական զորքի դուրսբերման՝ 1919 թ. օգոստոսի 15-ին Բաթում նավահանգստում սկսված գործողությանը, որի հետևանքով միջազգային դիվանագիտական շրջանակներում աճել էին մի կողմից՝ անհանգստությունը հայ ժողովրդի ֆիզիկական անվտանգության և հայկական պետականության պահպանման հարցերում, իսկ մյուս կողմից՝ տարակուսանքը, որ անգամ ստեղծված պայմաններում ամերիկյան կառավարությունը հրաժարվում է զորք հատկացնել՝ հայ ժողովրդին «թուրքերի, վրացիների, թաթարների և պարսիկների համատեղ հարձակման» վտանգից պաշտպանելու նպատակով⁵⁴:

Ըստ պետքարտուղարի տեղակալ Ֆրենք Լայոն Փուլքի և Մեծ Բրիտանիայում ԱՄՆ դեսպան Ջոն Վիլյամ Դեմիսի՝ վաշինգտոնյան կառավարությունը չէր կարող զորք ուղարկել մի երկիր, որի դեմ ԱՄՆ-ը պատերազմի մեջ չէր գտնվում: Ուստի Հայաստանին օգնելու միակ տարբերակը, նրա համոզմամբ, Կոնգրեսում Հայաստանի մանդատի հարցը բարձրացնելն էր Վ. Վիլսոնի կողմից՝ տարածաշրջանում ամերիկյան առաքելությունների ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա⁵⁵: Ըստ այդմ, Հ. Քինգը և Չ. Քրեյնը անհրաժեշտ էին համարում Օսմանյան կայսրությունից Արևմտյան Հայաստանի անջատումը և հայկական պետության ստեղծումը՝ դա համարելով հայերի դեմ իրագործած ցեղասպանության համար թուրքական պետությանը քաղաքական պատասխանատվության ենթարկելու միջոց: Բայց ելնելով այն իրողությունից, որ 1894–1896, 1908–1909 և 1915–1916 թթ. «սարսափելի կոտորածներից» հետո այդ տարածքում հայերը փոքրամասնություն էին կազմում թուրք և քուրդ վերաբնակիչների մեծամասնության համեմատ, անհնարին էր համարվում ծովից ծով անկախ Հա-

52 Չեկուցագրի՝ Հայաստանին վերաբերող հատվածի բովանդակությունն ամբողջությամբ տե՛ս Papers relating to the foreign relations of the United States. The Paris Peace Conference 1919, Vol. XII, Washington, D. C.: US Government Printing Office, 1947, էջ 802-848, Армения в документах государственного департамента США 1917–1920 гг., док. N 199, էջ 202-219.

53 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 450, ց. 2, գ. 6ա, թ. 140: Papers relating to the foreign relations of the United States. The Paris Peace Conference 1919, vol. II, Washington, D. C.: US Government Printing Office, 1934, էջ 841-874: Ջ. Հարբորդի առաքելության զեկուցագիրը 1919 և 1920 թվականներին տպագրվել է Վաշինգտոնում «Report of the American Military Mission to Armenia» վերնագրով: Армения в документах государственного департамента США 1917–1920 гг., док. N 255, էջ 305-339:

54 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 187-191: Армения в документах государственного департамента США 1917–1920 гг., док. N 173, էջ 179, էջ N 174, էջ 180, док. N 175, էջ 181-183, док. N 178, էջ 184.

55 Տե՛ս Ույնս տեղում, փաստ. N 175, էջ 183, փաստ. N 179, էջ 185:

յաստանի ստեղծումը: Դա, ըստ ամերիկյան գործիչների, կնշանակեր հայ փոքրամասնության տիրապետություն այլ ժողովուրդների մեծամասնության նկատմամբ, ինչը կառաջացներ վերջիններիս ընդդիմությունը՝ հայերին դնելով անապահով ու անպաշտպան դրության մեջ: Հ. Քինգը և Չ. Քրեյնը առաջարկում էին հայկական պետությունը ստեղծել այն տարածքում, որտեղ երաշխավորված կլինեն հայերի ազատությունը թուրքերի գերիշխանությունից: Ըստ նրանց՝ այդ նախադրյալն ապահովում էին Հայաստանի Հանրապետությունը և համաշխարհային պատերազմի ժամանակ ռուսների զինագրաված արևմտահայկական տարածքը՝ ելքով դեպի Սև ծով: Կիլիկիան, որտեղ հայերը կազմում էին բնակչության հազիվ 25 %-ը, Հայաստանի մանդատի մեջ կարող էր ընդգրկվել միայն այն դեպքում, եթե մեծ տերություններին չհաջողվեր Անատոլիայում հիմնել միատարր և զարգացող պետություն: Ըստ ամերիկյան առաքելության անդամների՝ այդ տարածքն այնքան մեծ չէր, որ հայերը չկարողանային զինագրավել և պահել, բացի այդ՝ չափավոր սահմաններում Հայաստանն արագ կվերականգնվեր որպես կենսունակ պետություն: Հայերը պետք է կենտրոնանային նշված տարածքում, իսկ մահմեդական բնակչությունը՝ այնտեղից աստիճանաբար դուրս բերվեր: Չափավոր սահմաններով Հայաստանի ստեղծման դեմ թուրքերն ու քրդերն այլևս չէին կարող բողոքել, քանի որ այդ դեպքում, ըստ նրանց, Հայաստանի տարածքն ավելի մեծ չէր լինելու, քան «պատմական Հայաստանը» (նկատի էր առնվում Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթների և Կիլիկիայի տարածքը – Լ. Հ.): Բացի այդ՝ նշված տարածքից հեշտությամբ կիրագործվեր թուրքերի ու քրդերի արտագաղթը, քան շատ ավելի ընդարձակ տարածքից: «Հայերը կանգնած են չափից շատը վերցնելու և ամեն ինչ կորցնելու իրական վտանգի առջև»⁵⁶, - նշված էր Հ. Քինգի և Չ. Քրեյնի զեկուցագրում: Չափավոր տարածքում հայերը կարճ ժամանակում կարող էին մեծամասնություն կազմել և հասնել ինքնակառավարման, իսկ երկրի մանդատային կառավարմանը նրանց մասնակցությունը կկրճատեր դրա ժամկետը: Նաև՝ քիչ կլինեին մանդատակիր պետությունից ակնկալվող ռազմական և ֆինանսական ծախսերը: Մանդատակիր պետության վերահսկողությունը շարունակվելու էր այնքան ժամանակ, մինչև հայերը կազմեին բացարձակ մեծամասնություն Հայաստանի սահմաններում և պատրաստ լինեին ինքնակառավարման ու ինքնապաշտպանության: Հայաստանը պետք է զարգանար որպես բուֆերային պետություն՝ թուրքերով և արաբներով բնակեցված շրջանների միջև:

Հ. Քինգը և Չ. Քրեյնը շեշտում էին, որ չափավոր տարածքում միատարր հայկական բնակչությամբ հայկական պետության ստեղծումով «կվերանար ընդարձակ տարածքով Մեծ Հայաստան ստեղծելու՝ հայերի հնարավորությունների վտանգը», ինչն անհանգստացնում էր թե՛ մեծ տերությունների, թե՛ Թուրքիայի ղեկավարներին:

⁵⁶ Նույն տեղում, փաստ. N 199, էջ 211:

Հ. Քինգը և Չ. Քրեյնը ցանկալի էին համարում կամ մեկ միասնական մանդատի սահմանումը Հայաստանի, Անատոլիայի և Կոստանդնուպոլսի համար, կամ այդ տարածքներից յուրաքանչյուրի համար սահմանված երեք առանձին մանդատների հանձնումը մեկ պետության: Ի վերջո, նրանք կանգ առան հետևյալ տարբերակի վրա. սահմանել մեկ ընդհանուր մանդատ ողջ Փոքր Ասիայի համար՝ առանց Միջագետքի և Սիրիայի՝ նրանում ներառելով Հայաստանի և Կոստանդնուպոլսի պետության մանդատները: Այդ երեք մանդատներից ամենաձանրը համարվում էր Հայաստանինը, քանի որ հայկական պետությունը ստեղծվելու էր հիմքից՝ միավորելով տևական ժամանակ երկու տարբեր պետությունների կազմում գոյատևած հայկական տարածքները: Դա հնարավոր էր իրար շաղկապված մի քանի նախադրյալների առկայության դեպքում: Մասնավորապես՝ թուրքերը գործնականորեն պիտի ընդունեին միասնական մանդատի գաղափարը, թուրքական պետությունը պետք է հրաժարվեր Հայաստանի նկատմամբ տարածքային հավակնություններից, նպաստեր հայերի հայրենադարձությանը, հոգար, որ հայերը նյութական հատուցում ստանային 1915–1916 թթ. տեղահանության, բռնագաղթի և զանգվածային կոտորածների հետևանքով կրած վնասների համար: Բացի այդ, Ռուսաստանն էլ պետք է հրաժարվեր Արևելյան Հայաստանից, իսկ ԱՄՆ-ի դաշնակից պետությունները, ըստ ամենայնի, աջակցեին նրան: Այս նախադրյալների բացակայության դեպքում ԱՄՆ-ը պետք է հրաժարվեր Փոքր Ասիայի մանդատից⁵⁷: Փաստորեն, Հ. Քինգը և Չ. Քրեյնը թերահավատ էին անկախ Հայաստան ստեղծելու գաղափարն իրագործելու հնարավորության հարցում: Ավելին, ակնհայտ էր, որ մանդատի ժամկետն ավարտվելուց հետո Փոքր Ասիայում տնտեսական և ռազմաքաղաքական անգերազանցելի առաջատար էր լինելու Թուրքիան, որը, բնականաբար, օգտագործելու էր բոլոր հնարավորությունները՝ Հայաստանին վերատիրանալու համար:

Կոստանդնուպոլսից Անատոլիա և Հայաստան ամերիկյան մանդատի այս տարբերակի իրագործման արդյունքում Փոքր Ասիայում կհաստատվեր ԱՄՆ-ի գերիշխանությունը: Դա էր պատճառը, որ Փարիզի հաշտության վեհաժողովում Հ. Քինգի և Չ. Քրեյնի առաջարկությունները դիվանագիտական բանակցությունների առարկա չդարձան: Բացի այդ, դրանք պատասխան չէին տալիս ԱՄՆ նախագահին հուզող բոլոր հարցերին: Ահա թե ինչու 1919 թ. սեպտեմբերին Անդրկովկաս և Փոքր Ասիա ուղարկվեց նոր ու բազմանդամ ամերիկյան առաքելություն Վ. Վիլսոնի վստահությունը վայելող գեներալ Ջեյմս Հարբորդի գլխավորությամբ՝ Հայաստանի մանդատին առնչվող հարցերը համակողմանիորեն ուսումնասիրելու և Կոնգրեսին համապատասխան զեկուցագիր ներկայացնելու նպատակով, որը որոշիչ էր լինելու Միացյալ և անկախ հայկական պետության ստեղծմանը վերաբերող հարցերում թե՛ ԱՄՆ-ի, թե՛ նրան դաշնակից պետությունների վերջնական դիրքորոշումը ձևավորելու տեսանկյունից⁵⁸: Մեծ

57 Տե՛ս նույն տեղում, փաստ. N 199, էջ 223:

58 Տե՛ս նույն տեղում, փաստ. N 174, էջ 181:

Բրիտանիան, Ֆրանսիան և Իտալիան, որոնց ներկայացուցիչները չէին մասնակցել Հ. Քինգի և Չ. Քրեյնի առաքելությանը, նպատակահարմար չհամարեցին ներկայացված լինել նաև այս առաքելության կազմում:

Ջ. Հարբորդի առաքելության զեկուցագիրը, որը 1919 թ. հոկտեմբերի 16-ին ներկայացվեց պետդեպարտամենտ, այնուհետև՝ Սենատ, բաղկացած էր 13 հատորից՝ խմբավորված 4 բաժիններում: Դրանք էին՝

ա) հայ ժողովրդի պատմությունն ու ներկա վիճակը,

բ) քաղաքական իրավիճակը և առաջարկներ այն վերահարմարեցնելու ուղղությամբ,

գ) մանդատում ներգրավված պայմաններն ու պրոբլեմները,

դ) թեր և դեմ նկատառումներ մանդատը ստանձնելու խնդրում:

Ջ. Հարբորդի առաքելության զեկուցագրում առաջարկվում էր Կոստանդնուպոլիսը, Անատոլիան, Արևմտյան Հայաստանը և Անդրկովկասը մեկ պետության՝ ԱՄՆ-ի երկարաժամկետ հովանավորության ներքո միավորելու հիմքում դնել հիմնախնդրի ընդհանրության և մանդատակիր պետության կողմից այդ ամբողջ տարածքի միասնական վերահսկողության արդյունավետության վերաբերյալ հիմնավորումները: Առաջարկվում էր ԱՄՆ-ի հովանավորությանը հանձնված ենթամանդատային տարածքի կառավարումը իրականացնելու նպատակով այն բաժանել երկու շրջանի՝ Թուրքիա և Անդրկովկաս, որի սահմաններում ընդգրկվելու էր Արևմտյան Հայաստանը: Շրջանները կառավարելու էին գլխավոր կոմիսարները: Ընդ որում, «այսպես կոչված հանրապետությունների» (նկատի էին առնված Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի նորանկախ հանրապետությունները - Լ. Հ.) անկախության ճանաչումն անհամատեղելի էր համարվում մանդատի հետ: Առաջարկվում էր ենթամանդատային տարածքում մշտական ազգային սահմանագծման փոխարեն նշված երկու շրջանների սահմաններում ձևավորել վարչաքաղաքական միավորներ, որոնք հետագայում հիմք կդառնային տեղական ուժերի իշխանության համար: Ջ. Հարբորդի զինվորական առաքելության իրավական հարցերով փորձագետ, գնդապետ Ջասպեր Բրինթոնն առաջարկում էր Անդրկովկասի շրջանը բաժանել երեք վարչաքաղաքական միավորի: Դրանցից մեկը պետք է լիներ Հայաստանի շրջանը, որի սահմաններում ընդգրկվելու էին Հայաստանի Հանրապետությունը և Արևմտյան Հայաստանի երեք վիլայեթները՝ Վանը, Բիթլիսը և Էրզրումը (համանուն քաղաքի հարցը ենթակա էր քննարկման - Լ. Հ.)՝ ելքով դեպի Սև ծով: Նրա համոզմամբ՝ այդ շրջանն ընդգրկվելու էր ոչ ավելին, քան Արևմտահայաստանի համար հայերի պահանջած տարածքի կեսը, իսկ դա այնքան քիչ էր բավարարելու համար հայերի ազգային պահանջները, որ, ըստ փորձագետի, «քիչ հավանական էր լինելու» այդպիսի Հայաստանի դեմ նրա հարևանների հակազդեցությունը: Հայաստանի շրջանը ենթարկվելու էր Անդրկովկասի գլխավոր կոմիսարին: Ըստ Ջ. Բրինթոնի՝ թեև Հայաստանի շրջանի ստեղծումը Հայկական հարցի լուծման նվազագույն տարբերակ էր, այնուամենայնիվ կարող էր բավարարել հայրենիք վերադառնալու, ազգային օջախ ունենալու՝ հայերի հետևողական պահանջը: Հայաստանի շրջանի ստեղծումը, հավանաբար, ընդու-

ների կլիներ նաև թուրքերի համար, որոնց մեծ մասը, բացառությամբ՝ օսմանյան պետության տարածքային ամբողջականության վերականգնում պահանջող թուրք ազգայնականների, հաշտվել էր Հայաստանի վերջնական կորստի գաղափարի հետ և երջանիկ կլիներ Հայկական հարցից ազատվել թուրքերի համար նվազագույն տարածքային կորստով: Զ. Բրինթոնի համոզմամբ՝ որքան անթույլատրելի էր Հայաստանի ենթարկումը թուրքական կառավարմանը, նույնքան անցանկալի էր նոր ու ընդարձակ սահմաններով անկախ Հայաստանի ստեղծումը և նրա կլանումը հեռանկարում հնարավոր ռուսաստանյան համադաշնության կողմից, մանավանդ որ հայերը կանխատրամադրված են դեպի Ռուսաստան⁵⁹:

Անդրկովկասը միասնական մանդատային տարածքի մեջ ներառելու անհրաժեշտությունը բացատրվում էր Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի անկախության վաղաժամ լինելու հանգամանքով, այդ հանրապետությունների տարածայնություններով ու հակասություններով:

Զ. Հարբորդի առաքելության անդամները դեմ էին Օսմանյան կայսրությանից անջատ, անկախ Հայաստանի ստեղծմանը երկու նկատառումներով. նախ՝ Հայաստանի տարածքում, որտեղ թուրքերը կոտորել էին ավելի քան մեկ միլիոն հայերի, մեծամասնություն կկազմեր մահմեդական բնակչությունը, եթե նույնիսկ հայ գաղթականները աշխարհի բոլոր ծայրերից վերադառնային իրենց բնակավայրերը: Այնուհետև՝ առաքելությունը գտնում էր, որ հայերի լարված հարաբերությունները թուրքերի ու քրդերի հետ կարող էին հանգեցնել նոր չդադարող կոտորածների:

Ըստ զեկուցագրի՝ միասնական մանդատով կազմավորվող պետությունների ժողովուրդները պետք է լինեին թուրքերը, թաթարները, հայերը և վրացիները: Այդ ընդարձակ տարածքի մանդատը ոչ թե երկու կամ երեք, այլ մեկ պետության հանձնելը հիմնավորվում էր նրանով, որ միասնական մանդատի դեպքում հայերը և թուրքերը կլինեին հարևաններ, ոչ թե հակառակորդներ, որոնց միջև անխուսափելի էին խանդն ու ատելությունը: Ուստի հետևություն էր արվում, որ միասնական մանդատն Արևմտյան Հայաստանի և Անդրկովկասի համար ամենաճիշտ տնտեսական որոշումն է՝ թուրքական կայսրության ամբողջ տարածքի ընդգրկումով: Առաքելության եզրակացությունը հետևյալն էր. «Հայկական հարցը չի կարող լուծվել Հայաստանում: Այն չի կարող վերջնականապես լուծվել՝ առանց պատասխանելու երկու հարցի.

Ի՞նչ պետք է անել Թուրքիայի հետ,

Ի՞նչ է պատրաստվում անել Ռուսաստանը»⁶⁰:

Նույն միտքն է արտահայտված նաև 1919 թ. հոկտեմբերի 16-ին Զ. Հարբորդի կողմից Ռ. Լանսինգին ուղղված հեռագրում, որի հիմնադրույթները հանգում էին հետևյալին. Հայաստանի և Անդրկովկասի մանդատն առանց Անատոլիայի և Կոստանդնուպոլսի ձեռնտու չէ. նախ՝ սպասվելիք ծախսերն այնքան մեծ են, որ

59 Տե՛ս նույն տեղում, փաստ. N 250, էջ 292-296:

60 Papers relating to the foreign relations of the United States. The Paris Peace Conference 1919, Vol. II, p. 861.

արժեզրկում են մանդատը, այնուհետև՝ գործնականորեն անհնար է այդ տարածքում ապահովել օրինականություն, կարգուկանոն, կյանքի և ունեցվածքի անվտանգություն, ապա նաև շեշտվում էր, որ մանդատակիր պետությունը գործնականորեն զրկված էր լինելու իրական իշխանությունից, քանի դեռ թուրքական պետության վերահսկողության ներքո էր գտնվում Կոստանդնուպոլիսը: Այս պայմաններում Ջ. Հարբորդը խիստ կասկածելի էր համարում Հայաստանի և Անդրկովկասի մանդատի վերջնական հաջողությունը⁶¹, իսկ Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Ջորջ Նաթանիել Քերզոնը Հայաստանի համար առանձին մանդատ սահմանելու որևէ անհրաժեշտություն չէր տեսնում⁶²:

Ամերիկյան առաքելությունը Արևմտյան Հայաստանի, Անդրկովկասի, Կոստանդնուպոլիսի և Անատոլիայի խնդիրը դիտում էր որպես անբաժանելի միասնություն: Առաքելությունն առաջարկում էր նաև հրաժարվել 1878 թ. Բեռլինի վեհաժողովում Արևմտյան Հայաստանում բարենորոգումների վերաբերյալ սահմանված և շուրջ չորս տասնամյակ իրեն չարդարացրած կոլեկտիվ վերահսկողության միջազգային սկզբունքից ու այն փոխարինել արևմտահայկական տարածքների նկատմամբ մեկ պետության՝ ԱՄՆ-ի հովանավորությամբ: Ավելին՝ ամրագրվում էր Հայաստանի արևմտյան և արևելյան մասերը Անատոլիայի ու անդրկովկասյան այլ տարածքների հետ ամերիկյան միասնական մանդատի ներքո միավորելու գաղափարը: Արդյունքում ԱՄՆ-ը ստանում էր տնտեսական և քաղաքական գերիշխանություն ենթամանդատային ընդարձակ տարածքում, որտեղ որպես նրա հուսալի ու ազդեցիկ քաղաքական հենարան դիտարկվում էր թուրք տարրը՝ ամենաստվարը տարածաշրջանում և փորձառուն՝ դեռևս միջնադարից իր պետականության անընդհատության առումով: Թեև ամերիկյան միասնական մանդատի գաղափարն ուներ առաջադիմական նպատակ՝ նպաստել տարածաշրջանի ժողովուրդների սոցիալ-տնտեսական, քաղաքական զարգացմանը, նրանց նախապատրաստել անկախության և միմյանց հետ խաղաղ գոյակցության, այնուամենայնիվ նրանում կար Հայաստանի անկախության և հայ ժողովրդի ֆիզիկական անվտանգության դեմ ուղղված սպառնալիք. հնարավոր է, որ հեռանկարում՝ մանդատի ժամկետի ավարտից հետո, Թուրքիան ոչ միայն չհրաժարվեր Արևմտյան Հայաստանից, այլև օգտվելով Հայաստանի արևմտյան և արևելյան մասերի միացյալ լինելու իրողությունից՝ իր ազդեցությունը հաստատեր նաև Արևելյան Հայաստանում:

Պատահական չէ, որ ըստ Ջ. Հարբորդի առաքելության զեկուցագրի՝ բազմաթիվ թուրք բարձրաստիճան պաշտոնյաներ պաշտպանում էին ողջ Օսմանյան կայսրության տարածքում մեկ պետության՝ ԱՄՆ-ի մանդատը հաստատելու գաղափարը⁶³: Թուրքական ազգայնական շարժման առաջնորդ Մ. Քեմալը ևս պաշտպանում էր Կոստանդնուպոլիսից-Անատոլիայից-Արևմտյան Հայաստան և Անդրկովկաս միասնական մանդատի գաղափարը՝ կեղծ հայտարարություններ անե-

61 Տե՛ս Արմենիա в документах государственного департамента США 1917–1920 гг., док. N 255, էջ 318-319.

62 Տե՛ս նույն տեղում, փաստ. N 271, էջ 352:

63 Տե՛ս Արմենիա в документах государственного департамента США 1917–1920 гг., док. N 255, էջ 320.

լով, թե ամերիկյան հովանավորության ներքո «հայերի դեմ Թուրքիայում նոր բռնություններ տեղի չեն ունենա»։ Նա փորձում էր հավաստիացնել ամերիկացիներին, որ թուրքական ազգայնական շարժումը «թշնամական հակում չունի Հայաստանի Հանրապետության նկատմամբ, որի կենտրոնը Երևանն է»:

Ակադեմիկոս Գ. Գալոյանն իրավացիորեն նկատում է, որ այս ձևակերպումը թուրք գործչի կողմից խորամանկ ակնարկ էր՝ ընդգծելու, որ իր գլխավորած շարժումն այլ Հայաստան չի ճանաչում: Դրանով, փաստորեն, Մ. Քեմալը պնդում էր, որ Թուրքիայի սահմաններում գոյություն չեն ունեցել ո՛չ Արևմտյան Հայաստան, ո՛չ էլ Հայկական հարց:

Հետևաբար հայ ազգային շահերի տեսանկյունից Զ. Հարբորդի առաքելության նախագիծը Քինգ-Քրեյնի նախագծի համեմատ ավելի հակահայկական էր: Սակայն առաքելության անդամների համոզմամբ՝ կարևոր էին ոչ թե մարդասիրությունից բխող հանգամանքները, այլ ամերիկյան գործարարության դիրքերից ակնառու այն իրողությունը, որ Կոստանդնուպոլսից - Անատոլիայից - Արևմտյան Հայաստան և Անդրկովկաս միասնական մանդատի, մասնավորապես՝ Հայաստանի մանդատի իրագործումը ենթադրում էր ԱՄՆ-ի պետական շահերից չբխող ֆինանսատնտեսական, ռազմաքաղաքական անխուսափելի դժվարություններ և խոշոր ծախսեր, որոնց համեմատ շատ փոքր էր լինելու ԱՄՆ-ի ակնկալած առևտրատնտեսական եկամուտը: Ըստ առաքելության անդամների՝ Հայաստանի մանդատը ենթադրում էր ԱՄՆ-ի երկարաժամկետ միջամտություն Հին աշխարհի գործերին, ինչը ոչ միայն հակասում էր Մոնրոյի դոկտրինին, այլև ԱՄՆ-ի արտաքին քաղաքական կուրսը փոխելու անհրաժեշտություն առաջանալու դեպքում այն կխոչընդոտեր Կոնգրեսի կողմից համապատասխան որոշումների ընդունմանը: Նաև շեշտվում էր, որ ԱՄՆ-ը որևէ առնչություն չի ունեցել Մերձավոր Արևելքում տիրող ծանր կացությանը, հետևաբար դրանից բխող որևէ պատասխանատվություն և պարտավորություն չի կարող կրել առավել ևս այն պայմաններում, երբ նույնիսկ Մեծ Բրիտանիան, Ռուսաստանն ու մյուս ազդեցիկ պետություններն առանձնապես հետաքրքրված չեն տարածաշրջանով⁶⁴: Առաքելության հենց այս դիտարկումներն էլ առանցքային դարձան ԱՄՆ-ի նախ՝ արտաքին գործերի կոմիտեի, ապա՝ ողջ բարձրագույն օրենսդիր իշխանության գործարար մեծամասնության համար թե՛ ամերիկյան միասնական մանդատի և թե՛ Հայաստանի մանդատի վիլսոնյան առաջարկներին գործնական ընթացք տալու հարցը վճռելիս: ԱՄՆ-ի Սենատը 1920 թ. հունիսի 1-ին մերժեց նախագահ Վ. Վիլսոնի՝ մայիսի 25-ի ուղերձը՝ միայն Հայաստանի նկատմամբ ամերիկյան մանդատն ընդունելու մասին: Այդպիսով, հայ ժողովուրդը, փաստորեն, ազատվեց ամերիկյան մանդատի հետևանքով իր անկախության ու ֆիզիկական անվտանգության դեմ հնարավոր թուրքական վտանգից, բայց միաժամանակ Հայաստանի Հանրապետությունը զրկվեց իր համար ցանկալի ամերիկյան հովանավորությունից: ԱՄՆ-ի համար դա նշա-

64 Տե՛ս նույն տեղում, փաստ. N 307, էջ 402: Այս առումով ուշագրավ է նաև ԱՄՆ ռազմական նախարար Նյուտոն Դիլ Բեյքեր Կրոսսերի՝ 1920 թ. հունիսի 2-ի հուշագիրը՝ շարադրված պետքարտուղար Բեյնբրիջ Քոլբիի համար: Տե՛ս նույն տեղում, փաստ. N 309, էջ 403-404:

նակում էր վիլսոնյան մերձավորարևելյան քաղաքականության պարտություն, որը Փարիզի վեհաժողովի աշխատանքների ընթացքում բրիտանա-ամերիկյան ու ֆրանս-ամերիկյան հակասությունների սրման դրսևորումներից մեկն էր և, անշուշտ, որոշակի դեր կատարեց Ազգերի լիգայի կանոնադրությունը չընդունելու ու նորաստեղծ միջազգային կազմակերպությանը չանդամակցելու, Վերսալի պայմանագիրը չվավերացնելու ու Վերսալյան համակարգի մյուս պայմանագրերի⁶⁵ ստորագրմանը չմասնակցելու՝ ԱՄՆ-ի դիրքորոշման մեջ:

Միացյալ և անկախ Հայաստանի գաղափարի նկատմամբ մեծ տերությունների քաղաքականության ամբողջացման տեսանկյունից ուշագրավ են ԱՄՆ պետդեպարտամենտի՝ 1920 թ. փաստաթղթերն ԱՄՆ-ի և նրան դաշնակից պետությունների կողմից Հայաստանի Հանրապետության ճանաչման վերաբերյալ: 1920 թ. հունվարի 19-ին Հինգի խորհրդի⁶⁶ անդամ պետությունները որոշեցին փաստացի (դե ֆակտո) ճանաչել Հայաստանի կառավարությունը՝ պայմանով, որ ճանաչումը չէր կանխորոշում հայկական պետության ապագա սահմանների հարցը: Զ. Քերզոնի մեկնաբանությամբ՝ Հայաստանի Հանրապետությունը նախկին Ռուսական կայսրության մաս էր՝ պատրաստ Ադրբեջանի և Վրաստանի հետ միասին միանալու հակաբոլշևիկյան պայքարին: Այդ հանգամանքը պետք էր օգտագործել՝ փաստացի ճանաչելով Հայաստանի կառավարությունը: Ըստ Զ. Քերզոնի՝ հետագայում՝ Օսմանյան կայսրության հետ հաշտության պայմանագիրը ստորագրելիս, Հայաստանի ճանաչման փաստը չէր կարող որևէ պարտավորությամբ կաշկանդել դաշնակից պետություններին՝ վերջնականորեն որոշելու Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի միջև պետական սահմանագիծը⁶⁷: Հայաստանի անկախության ճանաչման հարցի վերաբերյալ ԱՄՆ-ի պաշտոնական դիրքորոշումը ձևակերպվեց 1920 թ. հունվարի 27-ին, երբ պետքարտուղարի պաշտոնակատար Ֆ. Փոլկը Ֆրանսիայում ԱՄՆ դեսպան և Հինգի խորհրդում ամերիկյան պատվիրակության ղեկավար Հյու Քեմպբել Ուոլլեյսին հեռագրով հրահանգեց դաշնակից պետությունների Գերագույն խորհրդին՝ հաղորդելու, որ ԱՄՆ-ը համաձայն է վերջինիս որոշմանը Հայաստանի կառավարությունը փաստացի ճանաչելու վերաբերյալ, պայմանով, որ դա չէր կանխորոշում հայկական պետության ապագա սահմանների հարցը և ոչ ավելին: Հեռագրում շեշտված էր, որ ԱՄՆ-ը չի պատրաստվում փաստացի ճանաչել Հայաստանը, քանի դեռ վերջնականորեն որոշված չէ նրա պետական սահմանագիծը Թուրքիայի հետ⁶⁸: Նույն օրը համանման

65 Վերսալյան համակարգը՝ որպես Առաջին համաշխարհային պատերազմում հաղթանակած և պարտված պետությունների միջև նոր իրավահարաբերությունները կարգավորող պայմանագրերի ամբողջություն, ձևավորվել է Փարիզի հաշտության միջազգային վեհաժողովի արդյունքում: Նրա կազմում էին Ղազնակից պետությունների հետ կնքված հաշտության պայմանագրերը: Գերմանիայի (Վերսալի պայմանագիր, 1919 թ. հունիսի 28), Ավստրիայի (Մեն ժերմենի պայմանագիր, 1919 թ. սեպտեմբերի 10), Բուլղարիայի (Սեյի պայմանագիր, 1919 թ. նոյեմբերի 27), Հունգարիայի (Տրիանոնի պայմանագիր, 1920 թ. հունիսի 4), Օսմանյան կայսրության (Սևրի պայմանագիր, 1920 թ. օգոստոսի 10):

66 Փարիզի հաշտության վեհաժողովի ղեկավար մարմիններից էր՝ բաղկացած ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի կառավարությունների ղեկավարներից: Պարտված Գերմանիայի հետ Վերսալի պայմանագրի ստորագրումից հետո զբաղվել է նրան դաշնակից պետությունների հետ հաշտության պայմանագրերի նախապատրաստմամբ:

67 Տե՛ս նույն տեղում, փաստ. N 291, էջ 379-380:

68 Տե՛ս նույն տեղում, փաստ. N 295, էջ 385-386:

հրահանգ ստացան նաև Կոստանդնուպոլսում ԱՄՆ գերագույն կոմիսար Մարկ Լամբերտ Բրիստոլը և Վ. Հասկելը⁶⁹: Ներկայացված դիվանագիտական փաստաթղթերը վկայում են, որ Հայկական հարցի լուծումն, այնուամենայնիվ, կախված էր դաշնակից պետությունների և Թուրքիայի միջև հաշտության պայմանագիր կնքելուց:

1917–1919 թթ. դաշնակից տերությունների դիվանագիտական քննարկումների արդյունքում համաձայնեցված իրավաքաղաքական սկզբունքների հիման վրա՝ 1920 թ. փետրվար-մարտ ամիսներին Լոնդոնում դաշնակից տերությունների դեսպանների, ապա՝ ապրիլի 19-26-ը Սան Ռեմոյում (Իտալիա) տերությունների Գերագույն խորհրդի խորհրդաժողովներում վերջնականապես մշակվեց Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի նախագիծը: 1920 թ. ապրիլի 23-ին ԱՄՆ-ի կառավարությունը փաստացի ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը⁷⁰: Դրանից անմիջապես հետո Սան Ռեմոյի խորհրդաժողովը հավանություն տվեց Միացյալ Հայաստանի ստեղծմանը՝ Թուրքիայի հետ նրա սահմանների, մասնավորապես՝ Էրզրումն ու Տրապիզոնը Միացյալ Հայաստանի սահմաններում ընդգրկելու հարցը շարունակելով կապել ԱՄՆ-ի կողմից Հայաստանի մանդատը և հայ-թուրքական սահմանագծման իրավարարությունը ստանձնելու խնդիրների հետ, որոնց քննարկմանն ամերիկյան կողմը, ելնելով իր կառավարության որդեգրած քաղաքական նոր դիրքորոշումից, չէր մասնակցել: Նման առաջարկով 1920 թ. ապրիլի 26-ին Գերագույն խորհուրդը Սան Ռեմոյից դիմեց ԱՄՆ-ի կառավարությանը և նախագահ Վ. Վիլսոնին՝ նկատի ունենալով այդ պետության շահերն ու հետաքրքրություններն արևելյան հարցերում, մասնավորապես՝ Հայաստանի հարցում⁷¹: 1920 թ. մայիսի 17-ին պետքարտուղար Բ. Քոլբրի կողմից դեսպան Հ. Ք. Ուլլեյսին ուղղված հեռագրից պարզ է դառնում, որ նախագահ Վ. Վիլսոնը պաշտոնապես համաձայնել էր ստանձնել Հայաստանի սահմանները որոշող իրավարարի առաքելությունը⁷²:

ԱՄՆ-ի Կոնգրեսի կողմից Հայաստանի մանդատի մերժումից հետո հայկական անկախ պետության սահմանները գծելու հարցում ԱՄՆ նախագահին տրված իրավարարության առաքելությունն արդեն միակ իրավաքաղաքական գործիքն էր, որով Վ. Վիլսոնը կարող էր նպաստել Հայկական հարցի արդարացի լուծմանը: Պատահական չէ, որ 1920 թ. հուլիսի 14-ին Հայկական միացյալ պատվիրակության անունից գրված հուշագրում Ա. Ահարոնյանը և Պ. Նուբարը նրան առաջարկում էին Իրավարար վճռում Հայաստանի Հանրապետությանը տրվելիք արևմտահայկական վիլայեթների թվում նկատի ունենալ նաև Խարբերդը՝ հաշվի առնելով այդ վիլայեթի տնտեսական ու քաղաքական կարևորությունը հայկական անկախ պետության համար⁷³:

69 Տե՛ս նույն տեղում, փաստ. N 296, էջ 386:

70 Տե՛ս նույն տեղում, փաստ. N 304, էջ 393-394:

71 Տե՛ս Papers relating to the foreign relations of the United States. 1920. In 3 vols., vol. III. Washington, D. C.: US Government Printing Office, 1936, էջ 770, Армения в документах государственного департамента США 1917–1920 гг., док. N 306, էջ 396.

72 Տե՛ս նույն տեղում, փաստ. N 308, էջ 402-403:

73 Տե՛ս նույն տեղում, փաստ. N 311, էջ 409:

Նկատենք, որ բրիտանական կողմը, ի դեմս ԱՄՆ-ում իր դեսպան Օքլենդ Հեդդեսի, դեռևս Սևրի պայմանագրի ստորագրումից մի քանի օր առաջ՝ 1920 թ. օգոստոսի 6-ին, շտապում էր տեղեկանալ պետքարտուղար Բ. Քոլբրից, թե արդյո՞ք մոտ ապագայում կարելի է հրապարակված տեսնել Վ. Վիլսոնի Իրավարար վճիռը: Օգոստոսի 13-ին պետքարտուղարը քաղաքավարի և հստակ պատասխանում է, որ, ըստ Սևրի հաշտության պայմանագրի 89-րդ հոդվածի, Իրավարար վճիռը կարող է կայացվել միայն այն բանից հետո, երբ ԱՄՆ նախագահը շահագրգիռ պետությունների կողմից պաշտոնապես կտեղեկացվի պայմանագրի ստորագրման փաստին⁷⁴: 1920 թ. հոկտեմբերի 18-ին Ֆրանսիայում ԱՄՆ դեսպանությունը ստանում է Հաշտության միջազգային վեհաժողովի գլխավոր քարտուղարության հուշագիրը, որին կցված էր Սևրի պայմանագրի պատճենը: Նույն օրը դեսպան Հ. Ք. Ուոլլեյսն այդ հուշագիրը վերահասցեագրում է Վաշինգտոն՝ պետքարտուղար Բ. Քոլբրիին⁷⁵:

1920 թ. նոյեմբերի 22-ին՝ Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի միջև սահմանի վերաբերյալ Իրավարար վճիռ կայացման օրը, դաշնակից տերությունների Գերագույն խորհրդի նախագահին ուղղված գաղտնի նամակում ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնը նշում էր, որ ապագա Հայաստանի սահմանները գծելիս առաջնորդվել է Քինգ-Քրեյնի և Ջ. Հարբորդի առաքելությունների մատնանշած հիմնավորումներով, ըստ որոնց՝ Հայաստանի տարածքը պետք է լինի բավականաչափ՝ զարգանալու համար, բայց չլինի շատ մեծ: Նշվում էր նաև, որ Տրապիզոնի, Էրզրումի, Բիթլիսի և Վանի վիլայեթների տարածքը Միացյալ և անկախ Հայաստանի սահմաններում ընդգրկելու հարցում հիմք են ընդունվել ոչ թե տեղական բնակչության բաշխման ազգային ու կրոնական սկզբունքները, այլ բացառապես տնտեսական գործոնը⁷⁶:

Թեև Վ. Վիլսոնի Իրավարար վճիռ⁷⁷ համաձայն գծված հայկական պետություն-հայրենիքի սահմանները նկատելիորեն նեղ են ու չեն համընկնում հայոց էթնիկական տարածքին կամ պատմական հայրենիքին, այնուամենայնիվ Միացյալ և Անկախ հայկական պետություն ստեղծելու վերաբերյալ անբեկանելի իրավական ուժ ունեցող այդ որոշումը ենթադրում էր հայկական պետականության անվտանգության ամրապնդում, Հայաստանի՝ իբրև միջազգային իրավունքի սուբյեկտի կշռի բարձրացում, ցեղասպանության ու բռնազաղթի հետևանքով հայրենիքից արտաքսված հայության հայրենիք վերադառնալու բնական իրավունքի իրացում:

ԱՄՆ պետքարտուղարության փաստաթղթերը վկայում են, որ 1917 թ. համաշխարհային քաղաքականություն մտնելով Արևմտյան Հայաստանի ինքնավարու-

74 Տե՛ս նույն տեղում, փաստ. N 313-314, էջ 417:

75 Տե՛ս նույն տեղում, փաստ. N 317, էջ 419:

76 Տե՛ս նույն տեղում, փաստ. N 320, էջ 421-423:

77 Տե՛ս Arbitral Award of the President of the United States of America Woodrow Wilson. Full Report of the Committee upon the Arbitration of the Boundary between Turkey and Armenia. Washington, November 22nd, 1920. Prepared with an introduction by Ara Papiian. Yerevan: Printed by "Asoghik" Publishing House, 2011.

յան պահանջով, այնուհետև պաշտպանելով հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքը, Հայաստանի արևելյան և արևմտյան մասերի միասնության ու անկախության գաղափարը՝ ԱՄՆ-ը բնավ չէր շտապում այդ ուղղությամբ կոնկրետ գործնական քայլեր ձեռնարկել կամ ստանձնել միջազգային-իրավական որևէ պարտավորություն: Դա բացատրվում էր ոչ միայն Կոստանդնուպոլիս-Անատոլիա-Արևմտյան Հայաստան-Անդրկովկաս միասնական մանդատից բխող անխուսափելի ֆինանսատնտեսական ու ռազմաքաղաքական դժվարություններով, ԱՄՆ-ի և նրա եվրոպական դաշնակիցների սուր հակասություններով, այլև դրանց համատեքստում երկրի նախագահ Վ. Վիլսոնի ու Կոնգրեսի տարածայնություններով: Այդ պայմաններում Վ. Վիլսոնը, իրեն աջակցող պաշտոնյաների հետ միասին առաջնորդվելով բացառապես մարդասիրության վեհ գաղափարներով, ուղղակի անզոր էր իրագործելու Հայկական հարցի լուծման վերաբերյալ իր տված խոստումները:

Ուստի 1920 թ. հունիսի 1-ին Հայաստանի մասով մանդատի մերժումը՝ ԱՄՆ-ի Կոնգրեսի կողմից, և նոյեմբերի 22-ին Հայաստանի Հանրապետության ու Թուրքիայի միջև պետական սահմանագծման վերաբերյալ Վ. Վիլսոնի Իրավարար վճիռը նշանակում էին, որ օգոստոսի 10-ի Սևրի պայմանագրով Հայկական հարցի լուծումն ԱՄՆ-ի համար լույ ծրագիր էր, որի իրագործմանը մասնակցելու գործնական պարտավորություն և ցանկություն նա չունեիր: Իսկ Սան Ռեմոյի խորհրդաժողով - Սևրի պայմանագիր - Վ. Վիլսոնի Իրավարար վճիռ միջազգային - իրավական համակարգը կյանքի կոչելու համար բացակայում էր ամենակարևորը՝ հայկական ազդեցիկ և գործուն տնտեսական, ռազմաքաղաքական ու էթնիկական ուժը:

Լիլիթ Հր. Հովհաննիսյան - գիտական հետաքրքրություններն ընդգրկում են Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության ու պատմագրության հիմնահարցերը: 1 մենագրության, 5 գիտամեթոդական ձեռնարկի, շուրջ 40 գիտական հոդվածների հեղինակ է:

Էլ. փոստ՝ lilithovannisian@yahoo.com

Summary

THE REFLECTION OF THE IDEA OF UNITED AND INDEPENDENT ARMENIA IN THE DOCUMENTS OF THE USA STATE DEPARTMENT IN 1917-1920

Lilit Hr. Hovhannisyan

Key words – United and independent Armenia, Western Armenia, Republic of Armenia, Ottoman Empire, USA, State Department, mandate, free self-determination, independence, Paris International Peace Conference, Council of Four, W. Wilson.

The documents of the USA State Department are of paramount importance from the point of view of the study of the official discussions in 1917-1920 on the issue of creating united and independent Armenia and also for the essence and content of their American perception. According to these documents in the final stage of World War I the United States began to participate actively in the repartition of the Middle East and Transcaucasia. This aspiration of the US foreign policy corresponded to the geopolitical goals of the Entente countries. It is no accident that the US became soon after an influential geopolitical actor in regional affairs.

The documents of the State Department of 1917-1918, in particular the recommendations on American conditions have to be submitted to the Paris International Peace Conference, the correspondence of the Secretary of State R. Lansing with the Ambassadors of the US to Great Britain and Great Britain to the US and with the representatives of the US Government in Europe and Supreme Military Council of the Allied States, as well as, with the other officials. Then the “14 points” of President W. Wilson presented to the US Congress on January 8, 1918 testify that the United States regarded the Caucasus as a part of the problem concerning Ottoman Empire and was interested in providing the autonomy for Western Armenia under the protection of the great powers as minimum and the independence as maximum, thereby recognizing the right of the Armenian people for free self-determination. However, the US Government was not in a hurry to provide financial, material and military assistance to Eastern Armenians and Eastern Armenia standing on the road to independence or to protect Western Armenia from the inevitable invasion by the Turkish army.

A considerable part of the US State Department’s diplomatic documents refers to the discussions of the question of mandates at the Council of Ten, then at the Council of Four of the Paris Conference in January-March and May, 1919. These documents cast light upon the offers of the Prime Minister of Great Britain D. Lloyd George on recognizing the independence of Western Armenia and endorsing the US mandate not only for Western Armenia but also for Transcaucasia. They

represent Wilson's position on the establishment of a separate American mandate for the western and eastern parts of Armenia and a united American mandate for Constantinople, Anatolia, Armenia and Transcaucasia, as well as, the viewpoints of the Heads of Allied powers, US high-ranking officials. Moreover, the King Crane's and J. Harbord's state missions explored the region in June-August, 1919, on the justifications for the idea of a united American mandate and the prospects of its implementation. Due to some of the documents referring to the reasons and conditions for the de facto recognition of the Republic of Armenia by the Allied powers on January 19, 1920, and by the United States on April 23, 1920, the essence of decisions on establishment of United and independent Armenia made by the great powers at the Conferences of London in February-March, 1920 and San Remo in April, 1920, as well as, the reasons for the US Senate rejection of Armenia's mandate on June 1, 1920 and also the essence and legal-political importance of the undertaking of arbitral mission by W. Wilson for determination of the Armenian-Turkish border can be explained.

The State Department documents on listed problems are preserved in the National Archives of Washington and Yerevan. They are also included in the volumes officially published by the US Government in 1931-1947.

Резюме

ОТРАЖЕНИЕ ИДЕИ ЕДИНОЙ И НЕЗАВИСИМОЙ АРМЕНИИ В ДОКУМЕНТАХ ГОСДЕПАРТАМЕНТА США В 1917-1920 ГГ.

Лилит Гр. Оганнисян

Ключевые слова – Единая и Независимая Армения, Западная Армения, Республика Армения, Османская империя, США, Госдепартамент, мандат, свободное самоопределение, независимость, Парижская международная мирная конференция, Совет четырех, В. Вильсон.

Документы Государственного департамента США имеют первостепенное значение для изучения как официальных обсуждений, развернувшихся в 1917-1920 гг. по вопросу создания Единой и Независимой Армении, так и сущности и содержания их американского восприятия. Согласно этим документам, на завершающем этапе Первой мировой войны США стали активно участвовать в перделе Ближнего Востока и Закавказья. Такая направленность внешней политики Соединенных Штатов соответствовала геополитическим целям Антанты. Не случайно, что вскоре США стали влиятельным геополитическим актором в региональных вопросах.

Документы Госдепартамента 1917-1918 гг., в частности, рекомендации по американским условиям, подготовленные для предъявления на Парижской

международной мирной конференции, переписка госсекретаря Р. Лансинга с послами США в Великобритании и Великобритании в США, с представителями правительства США в Европе и в Высшем военном совете союзных держав и другими государственными должностными лицами, затем - представленные Конгрессу США 8 января 1918 г. «14 пунктов» президента В. Вильсона, свидетельствуют о том, что Соединенные Штаты рассматривали Кавказ как часть проблемы Османской империи и были заинтересованы в предоставлении Западной Армении как минимум автономии под протекторатом великих держав и как максимум - независимости, признав этим право армянского народа на свободное самоопределение. Однако правительство США не спешило оказывать финансовую, материальную и военную помощь ни вставшим на путь независимости восточным армянам и Восточной Армении, ни для защиты Западной Армении от нашествия турецких войск.

Значительная часть дипломатических документов Госдепартамента США касается обсуждений в январе-марте и мае 1919 г. вопроса мандатов в Советах десяти и четырех на Парижской конференции. Эти документы проливают свет на предложения премьер-министра Великобритании Д. Ллойд Джорджа о признании независимости Западной Армении и одобрении мандата США не только для нее, но и для Закавказья. Они представляют позицию В. Вильсона как по вопросу об учреждении отдельного мандата для восточной и западной частей Армении, так и единого мандата над Константинополем, Анатолией, Арменией и Закавказьем, а также взгляды глав союзных держав, американских высокопоставленных должностных лиц и государственных миссий Дж. Харборда и Крейн-Кинга, исследовавших регион в июне-августе 1919 г., об обоснованиях и перспективах реализации идеи единого американского мандата.

Некоторые документы объясняют причины и условия фактического признания Республики Армения союзными державами 19 января и Соединенными Штатами 23 апреля 1920 г., суть решений, принятых великими державами на конференциях в феврале-марте в Лондоне и апреле 1920 г. в Сан-Ремо о создании Единой и Независимой Армении, причины отказа Сената США от мандата 1 июня 1920 г., сущность и политико-правовое значение принятия В. Вильсоном арбитражной миссии по вопросу армяно-турецкого разграничения и т.д.

Документы Госдепартамента по перечисленным вопросам хранятся в Национальных архивах Вашингтона и Еревана. Они также включены в тома, официально опубликованные правительством США в 1931-1947 гг.

REFERENCES

1. Armenija v dokumentax gosudarstvennogo departamenta SshA 1917–1920 gg (sost. i per. s angl. **Maxmurjan G. G.** Jer.), in-t istorii NAN Armenii, 2011 (**In Russian**).
2. Hayastani azgayin arxiv (HAA), f. 57, c. 1, g. 151, 154, f. 450, c. 2, g. 6a (**In Armenian**).
3. **Hovhannisyán L.**, Haykakan harcə yev' mec' terut'yunnerə 1914–1917 t'vakannerin, Ye'r., "Zangak-97", 2002 (**In Armenian**).
4. **Maxmuryan G.**, Hayastann u Haykakan harcə AMN-I 1917–1918 tt. qagh'aqakanut'yan vo'lortum: "Arajin ash'xarhamartə yev' hay zh'ogh'ovurdə (patmut'yun yev' ardiakan xndirner)" mijazgayin gitazh'ogh'ovi zekucumneri zh'ogh'ovac'u, Ye'r., HH GAA patm. inst., 2015 (**In Armenian**).
5. **Galoyan G.**, Hayastanə mec' terut'yunneri ash'xarhakagh'akan ar'c'akatumnernum (XVI daric 1917 t'), Ye'r., HH GAA "Gitut'yun" hrat., 2004 (**In Armenian**).
6. **Marukjan A. C.** Armjanskij vopros i politika Rossii (1915–1917 gg.), Jerevan, MIGA NAN RA, 2003 (**In Russian**).
7. **Maxmurjan G. G.** Armenija v politike SshA 1917–1923 gg. Jerevan, in-t istorii NAN Armenii, 2018 (**In Russian**).
8. Genocid armjan: otvetstvennost' Turcii i objazatel'stva mirovogo soobsh'estva. Dokumenty i kommentarij (red. i sost. professor Barsegov Ju.) G. V 2-x t. T. 1, M., "Gardariki", 2002 (**In Russian**).
9. Arxiv polkovnika Xauza, t. IV, M., "Politizdat", 1944 (**In Russian**).
10. **Galoyan G.**, Hayastanə yev' mec' terut'yunnerə 1917–1923 tt., Ye'r., HH GAA "Gitut'yun" hrat., 1999 (**In Armenian**).
11. **Shamsutdinov A.** Nacional'no-osvoboditel'naja bor'ba v Turcii, 1918–1923, M., "Nauka": Gl. red. vost. lit., 1966. Ye'r., HH GAA «Gitutyun» hrat., 2004 (**In Russian**).
12. **Avetisyan H.**, Haykakan harcə 1918 t', Ye'r., HH GAA "Gitutyun" hrat., 1997 (**In Armenian**).
13. **Hovhannisyán L.**, Hayastanə "Kovkasyan tan" t'urqakan yev' K. Polis–Andrkovkas miasnakan mandati amerikyan c'ragrerum: "Zh'amanakacic qagh'aqakrt'akan gorc'ənt'acnerə yev' humanitar gitut'yunneri zargacman himnaxndimerə Hayastanum: («Gladz'or» kar'avarman hamalsarani profesoradasaxosakan kazmi yev' aspirantneri ar'ajin gitakan nstash'rijani nyut'eri zh'ogh'ovac'u)", Ye'r., "Noyyan Tapan", 2004 (**In Armenian**).